



«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՅԻԱՑԻԱ
ԴԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



«ԼԻԳԱ ԸՆՎԵԼՆՍ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՓԱՍՏԱԲԱՆԻԹՅՈՒՆ.
ՆԵՐԿԱ ՎԻճԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ

**ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ



«ԼԻԳԼ ՇԼԱՅԸՆ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻճԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ»

ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան-2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՂՄՈՒՆՅԱՆ

Նախարան 4

ՎԱՐԴՈՒՔԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Ներածություն 7

Փաստաբանության ձևավորումը, կայացումը, ներկա

վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում 8

«Փաստաբան» և «Փաստաբանություն» հասկացությունները:

ՀՀ փաստաբանների պալատը 8

Փաստաբանության պատմական զարգացումը և ներկա

վիճակը Հայաստանում 12

Փաստաբանության զարգացման նախադրյալները ՀՀ-ում 14

Եզրափակիչ մաս 17

Օգտագործված գրականության ցանկ 18

ԻԳՈՐ ԱՎԱԿՅԱՆ

Ներածություն 19

Նկարագրական մաս 20

Փաստաբանության պատմական զարգացման հիմնական

ուղենիշները Հայաստանում 20

Փաստաբանության և փաստաբանական

գործունեության էուրյունը, նպատակները և խնդիրները:

Փաստաբանի իրավական կարգավիճակը 25

Փաստաբանության դերը քաղաքացիական

հասարակության ամրապնդման և իրավական

սկզբության կայացման գործում 30

Հոգեբանության, բարոյականության, էրիկայի և

հեղինակության դերը փաստաբանական

գործունեությունում 31

Եզրափակիչ մաս 33

Օգտագործված գրականության ցանկ 36

ՍԱՐԻԱՍՏ ՕՍԽՊՅԱՆ

Ներածություն 38

Նկարագրական մաս 39

ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը 47

<i>ՀՀ Սահմանադրական դատարանում գործի քննությանը</i>	
<i>խոշնութող հանգամանքների առկայության ստուգումը</i>	48
<i>ՀՀ Սահմանադրական դատարանում գործի</i>	
<i>քննության հիմքերը և բույլատրելիությունը</i>	51
<i>Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի</i>	
<i>բովանդակությունը</i>	52
<i>Եզրափակիչ մաս</i>	54
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	56

ՆԱԽՐԱ ԴԻԼԱՆՅԱՆ

<i>Ներածություն</i>	58
<i>Նկարագրական մաս</i>	58
<i>Իրավունքի էրիկայի հասկացությունը և աղբյուրները</i>	67
<i>Փաստաբանի վարքագծի կանոնագիրը</i>	68
<i>Էրիկայի կանոնները փաստաբան-գործընկեր</i>	
<i>փոխհարաբերությունների համակարգում</i>	71
<i>Էրիկայի կանոնները փաստաբան-դատարան</i>	
<i>փոխհարաբերությունների համակարգում</i>	72
<i>Էրիկայի կանոնները փաստաբանի և դատախազության,</i>	
<i>իրավապահպան մարմինների փոխհարաբերությունների</i>	
<i>համակարգում</i>	72
<i>Եզրափակիչ մաս</i>	73
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	73

ՆԱԽԱԲԱՆ

Պետությունը կարող է կոչվել արդարացի և հարատև լինել միայն այն դեպքում, երբ այն կաշկանդված է իրավունքով: Այսօր յուրաքանչյուր քաղաքակիրք պետություն ինքն է ստեղծում իր ժողովրդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեջ խանդզմերը և դրանց իրականացման եղանակները: Եվ այստեղ դժվար է գերազանահատել փաստաբանական ինստիտուտի դերը պետության և հասարակության շահերի հավասարակշռման, արդարադատության իրականացմանն աջակցության գործում:

Ընդգրկված չինելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ՝ փաստաբանությունը հանդես է գալիս որպես անկախ մի օղակ, միևնույն ժամանակ ոչ անջատ հասարակությունից, և փորձում է մեծապես օժանդակել քաղաքացիական հասարակության կայացմանը: Փաստաբանությունը հանդիսանում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ և ծառայում է քաղաքացիական հասարակության կայացմանը, որի միջոցով քաղաքացին հնարավորություն ունի պաշտպանել իր շահերը թե՛ պետական մարմինների, և թե՛ առանձին քաղաքացիների անօրինական գործողություններից:

Հայաստանում փաստաբանական ինստիտուտը ունի արդեն 10 տարվա պատմություն: Չահագրզին անձանց և կառույցների կողմից մշտական քայլեր և գործընթացներ են ձեռնարկվում դրա զարգացման ու կայացման ճանապարհին: 1998թ.-ից ի վեր փաստաբանական ինստիտուտի զարգացումը կատարվում է ավելի համակարգված կերպով, ինչի ապացույցն են «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքը, միասնական պալատը և Վերջինիս հետևողական գործունեությունը փաստաբանության նպատակների ու առաքելության իրականացման ճանապարհին: Սակայն միայն ինստիտուտի բարեփոխումները, անշուշտ, բավարար չեն կարող լինել, և անհրաժեշտ են որակական բարեփոխումներ: Այստեղ, անտարակույս, իր կարևորությունն ունի նոր սերնդի երիտասարդ իրավաբանների՝ որպես ապագա փաստաբանների կրթության և ու զարգացման գործը, որի պատասխանատվությունն այսօր ստանձնել են կրթական համակարգն ու քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ:

Այս խնդիրների իրագործմանն է նպաստում նաև «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասցիֆացիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվող ամենամյա ուսանողական գիտաժողովը, որը կրում է «Փաստաբանություն». ներկա վիճակը և

զարգացման հեռանկարները ՀՀ-ում» խորագիրը: Այն արդեն ձևավորված ավանդույթ է և իր հետաքրքրությունն ունի ուսանողների ու երիտասարդ իրավաբանների շրջանում:

2007թ.-ի դեկտեմբերի 5-ին Երևան հյուրանոցում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվող «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի բանավոր փուլը: Գիտաժողովի հոգած Զարգացման համագործակցության միջեւեցական կազմակերպությունը (ICCO):

Գիտաժողովի հիմնական նպատակն է փաստաբանության ոլորտում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, ապահովել նրանց մասնակցությունը փաստաբանական ինստիտուտի կայացման գործընթացում, խրախուսել նրանց կողմից լուրջ ուսումնափրությունների իրականացումը, նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի դերի բարձրացմանը, ինչպես նաև թույլ է տալիս լսել նոր զաղափարներ և լուծումներ, որոնք առաջարկում են նոր սերնդի երիտասարդ իրավաբանները:

Գիտաժողովը բաղկացած էր 2 փուլից՝ գրավոր և բանավոր: Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել 28 ուսանողներ՝ Երևանից և ՀՀ մարզերի իրավաբանական բուհերից և բուհերի իրավաբանական ֆակուլտետներից: Գիտաժողովի գրավոր փուլին մասնակցեցին սահմանված ժամկետներում կազմակերպիչներին իրենց գեկույցները ներկայացրած 8 իրավաբան ուսանողներ: Ներկայացված չորս լավագույն աշխատանքների հեղինակներն իրավունք ստացան մասնակցել բանավոր փուլին, որի ընթացքում ներկայացրեցին իրենց գեկույցները: Զեկուցողները բանավոր փուլի ընթացքում ներկայացրեցին իրենց աշխատանքները, որոնցում անդրադարձել էին փաստաբանական ինստիտուտին, գործող օրենսդրությանը, վեր էին հանել դաշտում առկա թերություններն ու բացրումները՝ միաժամանակ առաջարկելով իրենց լուծման տարրերակներն առաջ քաշված հարցերի շորջ: Երիտասարդ իրավաբանների ելույթները գնահատվում էին հեղինակավոր փաստաբաններից կազմված ժյուրիի կողմից: Մասնավորապես, գիտաժողովի բանավոր փուլի դատավորներն էին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, փաստաբան Կարեն Չաղոյանը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության պետի տեղակալ Վրեժ Գասպարյանը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի վարչության անդամ, փաստաբան Լիանա Հարությունյանը, Հա-

յաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի փոխնախագահ, փաստաբան Դավիթ Աբգարյանը:

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի բանավոր փուլի արդյունքների ամփոփման արդյունքում «Լավագույն գրավոր գեկույց» և ընդհանուր արդյունքներով գիտաժողովի չորրորդ մրցանակին արժանացավ Եվրոպական Կրթական Տարածաշրջանային ակադեմիայի երկրորդ կուրսի ուսանողուիի Նաիրա Դիլանյանը: Գիտաժողովի երրորդ մրցանակին արժանացավ Եվրոպական Կրթական Տարածաշրջանային ակադեմիայի երկրորդ կուրսի ուսանողուի Մարիամ Օսիպյանը: Երեսանի «Գլաձոր» համալսարանի երրորդ կուրսի ուսանող Իզոր Ավագյանն արժանացավ գիտաժողովի երկրորդ և ՀԵԽԱ-ի նախագահ Կարեն Զադոյանի կողմից սահմանված հատուկ մրցանակներին: Իսկ գիտաժողովի հայրող և լավագույն հոեստոր ճանաչվեց Գավառի անտական համալսարանի հիմնադրորդ կուրսի ուսանողուիի Վարդուհի Բադալյանը:

Գիտաժողովի հաղթողները ստացան արժեքավոր մրցանակներ: Գրավոր փուլի մյուս մասնակիցները ևս արժանացան խրախուսական մրցանակների:

Սույն գրքույկում զետեղված են գիտաժողովի բանավոր փուլի մրցանակային տեղեր գրադարան բոլոր մասնակիցների գեկույցները: Նախատեսվում է այս ժողովածուն անվճար տրամադրել իրավաբանական ֆակուլտետների գրադարաններին, ինչպես նաև անվճար տարածել իրավաբան ուսանողների, իրավաբանության հետաքրքրող անձանց և շահագրգիռ կառույցների շրջանում:

Սյուլաննա Սողոմոնյան
Գիտաժողովի կազմակերպիչ,
իրավաբան

ՎԱՐԴՈՒՐԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Ներածություն

Ցանկացած երևոյիքի էության բացահայտման և ճիշտ գնահատման համար հարկավոր է ուսումնասիրել երևոյիքի առաջացման նախադրյալները և զարգացման դիալեկտիկան: Փաստաբանության ձևավորմանն ու պատմական զարգացմանը նպատակահարմար է անդրադառնալ սույն աշխատանքի ներածական մասում, իսկ նկարագրական մասում հիմնական շեշտը կդնենք փաստաբանության ներկա վիճակի և զարգացման հեռանկարների վրա:

Այսպես, պետությունների առաջ գալով ձևավորվեց դատական համակարգը: Առաջին դատարաններն ինկվիզիցիոն էին: Եթե մեղադրանքը կրում էր իրավական բնույթ, ապա պաշտպանությունն իրականացնում էր քաղաքացին ինքը, ինչը խախտում էր նրա իրավունքները, հակասում օրինական շահերին: «Դատական համակարգի զարգացումը նպաստեց մրցակցային դատավարության կայացմանը»¹: «Դատական համակարգը հասավ զարգացման այն փուլին, երբ մեղադրող կողմի կողքին անհրաժեշտ եղավ պաշտպանի ներկայությունը: Քաղաքացիական իրավունքում ձևավորված բարդ և տարատեսակ իրավահարաբերությունները ևս հիմք հանդիսացան փաստաբանության ի հայտ գալու համար:»

Փաստաբանությունը, որպես իրավական ինստիտուտ, իր ձևավորումը սկսեց Հին Հռոմում: Այստեղ նախքան միավետության ժամանակաշրջանը քաղաքացիներն ունեին լայն դատավարական իրավունքներ և կարող էին ստանալ մասնագիտական իրավաբանական օգնություն: Արդյունքում պաշտպանությունը փոխադրվեց իրավական դորս, և հիմք դրվեց փաստաբանությանը:

Հայաստանում ևս փաստաբանությունն ունի հիմ արմատներ: Այս ինստիտուտն իր ամրագրումն է ստացել «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագծում: Աստրախանի հայոց դատաստանագրում հոդվածներ կային հայցվորի օրինական ներկայացուցչի (փոխանորդի) մասին, ով կարող էր նաև մասնագետ իրավաբան լինել²:

18-19-րդ դարերի Ֆրանսիայում, Անգլիայում, Եվրոպական այլ երկրներում վերջնականապես ձևավորված փաստաբանությունն իր

¹Արդյուն իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Մանուի օրենքներով նախատեսվում էր մրցակցային դատավարությունը:

²Տես «Դատաստանագիրը Աստրախանի Հայոց», Գլուխ Ե

Էռությամբ գրեթե նույնացավ փաստաբանության ժամանակակից քննության հետ: 1806թ. Ֆրանսիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված էր, որ ընդհանուր դատարաններում պահանջվում է փաստաբանի պարտադիր մասնակցությունը:

ԱՄՆ 1787թ. սահմանադրությամբ ի սկզբանե նախատեսված չէր փաստաբանության ինստիտուտը, բայց 1789-1791թթ. «Ֆրավունքների մասին բիլ»-ում այն ստացավ իր ամրագրումը: ԱՄՆ սահմանադրության արդեն իսկ 6-րդ ուղղմամբ ինստիտուտը ստացավ նաև սահմանադրական ամրագրում:

Ը. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագծում այս ինստիտուտն ավելի վաղ էր ամրագրվել, բայց նախագիծը կյանքի չկոչվեց, ուստի, որպես ժամանակակից փաստաբանական ինստիտուտի մոդել ընդունված է համարել ֆրանսիական և անգլիական նախատիպը:

Այսպիսվ, դատավարական իրավունքների պատմական զարգացումը պարարտ հող ստեղծեց փաստաբանության ինստիտուտի կայացման համար: Սերորյա դատական հանձնարարության անհնարինության առանց փաստաբանության: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում զարգացած փաստաբանական ինստիտուտն իրավական պետության կարևոր հենասյուններից մեկն է:

Փաստաբանության ձևավորումը, կայացումը, ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում

«Փաստաբան» և «Փաստաբանություն» հասկացությունները: ՀՀ փաստաբանների պալատը

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածում ամրագրված է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու և ձերբակալման, խափանման միջոցի կիրառման կամ մեղադրանքի առաջարկման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը: Վերոհիշյալ գործունեությունն իրականացնող հիմնական սուբյեկտը փաստաբանն է:

Փաստաբան: «Փաստաբան» բառացի նշանակում է փաստեր բանեցնող: Որոշ երկրներում փաստաբանը կոչվում է ադվոկատ՝ լատիներեն adlocutus բառից, որը նշանակում է «օգնության կանչված»: Կարևոր է ուշադրություն դարձնել **փաստաբան** և **ադվոկատ** բառերի իմաստային տարրերությանը: Բռնության և վտանգի հասարակությունում թույլը

օգնություն էր խնդրում ուժեղից: Այսպիսով՝ «օգնության կանչվածք» դառնում էր թույլի պաշտպանը¹: Իրավագործ հասարակության և բռնատիրական պետությունների փոխարեն այսօր ձևավորվում է քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն: Քաղաքացիական հասարակությունում փաստաբանը, եենվելով փաստերի վրա, պաշտպանում է իր փաստահորդի իրավունքներն ու օրինական շահերը ոչ թե բռնատիրական կամայականությունների պայմաններում՝ օգտվելով ուժի հեղինակությունից, այլ իրավական օրենքների վրա հիմնվելով: Փաստաբանն իր իրավական պրակտիկայում նպաստում է հասարակության կողմից իրավունքի գերակայության ընդունմանը, իրավական գաղափարների տարածմանը, նպաստում է մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը և հասարակության իրավագիտակության բարձրացմանը:

2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը նվիրված է փաստաբանին և նրա գործունեությանը: Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանն այն անձն է, ով նշված օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երթում:

Փաստաբանական գործունեության արտոնագրմանն է նվիրված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը, որտեղ նշված են փաստաբանին ներկայացվող պահանջները, արտոնագրի և հավատարմագրի տրամադրման կարգը և այլն:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է նաև փաստաբանի կողմից իրականացվող գործողությունների շրջանակը: Իրավական հարցերով բանավոր կամ գրավոր խորհրդատվության տրամադրում, իրավաբանական տարարնույթ փաստաթղթերի և դրանց նախագծերի կազմում, փաստահորդի շահերի ներկայացում տարբեր պետական և ոչ պետական, մունիցիպալ մարմիններում, դեկիլտների, զանցանքների և հանցանքների դեպքում անձի իրավունքների պաշտպանություն (անկախ այն հանգամանքից՝ իրավախախոռնը կատարվել է փաստահորդի կողմից, թե՛ նրա նկատմամբ) և այլն:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխում թվարկվում են փաստաբանի հիմնական իրավունքները և պարտականությունները, որոնք բազա են ստեղծում փաստաբանի նախագիտական գործու-

¹ Հին Հռոմում և միջնադարյան Եվրոպայում իր ձևավորումը սկսած այս ինստիտուտը գործել է քրեական դատավարությունում՝ հետագայում ներառվելով նաև քաղաքացիական փարույթ:

նեուրյան համար: Փաստաբանի հիմնական իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններին օրենսդրի անդրադարձը հիմնականում կենտրոնացած է փաստաբանի և վատահորդ(ներ)ի շահերի միջև հակասություններ առաջանալու դեպքում վատահորդի շահերի պաշտպանությանը, փաստաբանի կողմից օրենքի շրջանակում գործելուն, մյուս կողմից՝ փաստաբանին հնարավորություն է տրվում հրաժարվել ծառայություններ մատուցելուց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և վատահորդի հետ կնքած պայմանագրի հիման վրա: Փաստաբանի գործունեությունն ունի օրենքով ամրագրված երաշխիքներ, փաստաբանն ունի իրավական պաշտպանության իրավունք և կարող է ունենալ օգնական(ներ) և փորձնակ(ներ):

Առանձնապես կարևորվում է փաստաբանի՝ որպես պաշտպանի դերը: Պաշտպան է համարվում այն փաստաբանը, ով քրեական գործի վարույթում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և ցուցաբերում է իրավաբանական օգնություն՝ օրենքով շարգեված բոլոր միջոցներով: Փաստաբանը պաշտպանի կարգավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ նրա պաշտպանությունը ստանձնելու պահից՝ այդ մասին տեղեկացնելով քրեական վարույթն իրականացնող մարմնին: Իր կարգավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնն է ներկայացնում անձը հաստատող փաստաբուոք և փաստաբանների պալատի կողմից տրված փաստաբան լինելու հանգանակը հաստատող փաստաբուոք: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված են քրեական վարույթին պաշտպանի նաևնակցության դադարեցման և քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերը, պաշտպանի իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանության կարևոր հիմքերից է հանրային պաշտպանի ինստիտուոտը: Հանրային պաշտպան է համարվում հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանը, որը գործում է հանրային պաշտպանի գրասենյակի դեկանավարի ներկայացմանք՝ պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա¹: Ի տարբերություն փաստաբանական գործունեության, որն ըստ էության ձեռնարկատիրական գործունեություն է՝ հանրային պաշտպանի գրասենյակը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից:

¹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 44, ընդունված՝ 14.12.2004թ.:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական գործերով, օրինակ, այլմենուի գանձման վերաբերյալ գործերով:

Փաստաբանություն: Փաստաբանությունը հանրային, իրավական ինստիտուտ է: Այս ինստիտուտի առկայությունը հնարավորություն է ընձեռում պահպանել հավասարակշռություն հասարակության, պետության և անձանց (ֆիզիկական, իրավաբանական) շահերի միջև:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաբանությունը փաստաբաների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ»: Փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, հոչակումն ունի կարևոր, անգամ առանցքային նշանակություն:

Կատարելով փոքրիկ պատմական ակնարկ նոր ժամանակի պատմությանը՝ կարելի է տեսնել, թե ինչպե՞ս է քաղաքացիական հասարակության զարգացման աստիճանն անդրադարձում փաստաբանության ինստիտուտի վրա:

1890-ական թթ. Անգլիայում պաշտպանի մասնակցությունը գործին բույլատրվում էր մեղադրանք ներկայացնելու պահից. Անգլիան կանգնած էր քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին:

Գերմանական ազգի Հռոմեական Սրբազն Կայսրությունում գործող օրենսդրության համաձայն՝ մեղադրողը և ամբաստանյալը (նաև նրա պաշտպանը) ունեին հավասար դատավարական իրավունքներ. այս պետությունում արդեն սկսվել էին ինդրিযւդիալ խմբումները, որոնք հանգեցնում էին հասարակության զարգացման որակական մեկ աստիճանից մյուսին անցնելուն:

1893թ. Շապոնիայում ընդունվեց օրենք փաստաբանության մասին, բայց փաստաբանների իրավունքները խիստ սահմանափակ էին, փաստաբանական ծառայությունը գտնվում էր ինչպես արդարադատության նախարարի, այնպես էլ դատախազության հսկողության ներքո: Դատախազն իրավունք ուներ փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության: Իր խստակեցությամբ և դարեր ի վեր քաղաքացիների իրավունքների խիստ սահմանափակմամբ աշքի ընկնող երկրում փաստաբանության ինստիտուտի օրենսդրական ամրագրումը կարևոր առաջնարար էր: Շապոնիայի ժողովուրդը սկսել էր ազատվել հոգեբանական կազմանքներից՝ քայլելով դեպի քաղաքացիական հասարակություն:

Քաղաքացիական հասարակությունն առանձնանում է իր անդամների բարձր իրավագիտակցությամբ, ինչը ոչ միայն չի նվազեցնում փաստաբանության դերը, այլև առավել դյուրին է դարձնում փաստաբանի աշխատանքը:

ՀՀ փաստաբանների պալատը: «ՀՀ փաստաբանների պալատ» հասկացությունը, պալատի մարմինները, մարմինների գործունեության կարգը, պալատի նախագահի կարգավիճակը, ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը, գույքը, պալատի հասարակական միավորումները նախատեսվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում:

ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ է¹: Փաստաբանների պալատի խնդիրները նպատակառուղղված են փաստաբանների բնականոն գործունեության ապահովմանը և փաստաբանության ինստիտուտի զարգացմանը:

Փաստաբանական պալատի մարմիններն են՝

- փաստաբանների պալատի ընդիանուր ժողովը,
- փաստաբանների պալատի խորհուրդը,
- փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը,
- փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Սերօրյա միջազգային իրավական դաշտում տեղի ունեցող ունի-ֆիլկացիոն գործընթացների արդյունքում «փաստաբան» և «փաստաբանություն» հասկացությունները կրում են որոշակի փոփոխություններ և անցնում որակական նոր աստիճանի:

Փաստաբանության պատմական զարգացումը և ներկա վիճակը Հայաստանում

Փաստաբանության զարգացումը Հայաստանում կարելի է բաժանել երեք պայմանական փուլի:

- Նախքան խորհրդային կարգերը փաստաբանության զարգացման պատմություն,
- ՀԽՍՀ գրյության ընթացքում փաստաբանության զարգացման պատմություն,
- 1991թ. ՀՀ անկախացումից հետո փաստաբանության զարգացման պատմություն:

¹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, ընդունված՝ 14.12.2004թ.:

1773թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ «Որոգայր փառաց» սահմանադրական նախագիծը: Այս մի քայլ առաջ էր կանգնած ժամանակի իրավական մտքից և աշխարհում առաջին իրավական ակտերից էր, որ ամրագրեց փաստաբանության (քնագրում՝ դպիր, ատենաբան) ինստիտուտը: Հետագայում փաստաբանությունը զարգացման և կայացման ճանապարհին կանգնեց 1918թ. Հայաստանի 1-ին Հանրապետության օրոր: Դատական համակարգի ձևավորումից հետո, ընդօրինակելով ռուսական համապատասխան օրենսդրությունը, Հայաստանի 1-ին Հանրապետությունում հիմք դրվեց փաստաբանությանը:

Խորհրդային կարգերի հաստատումը, որ Հայաստանում փաստաբանության զարգացման երկրորդ պայմանական փուլն էր, կտրուկ փոխեց Հայաստանի 1-ին Հանրապետության պետության և իրավունքի զարգացման ուղղությամբ որդեգրած քաղաքականությունը: Խորհրդային իշխանության տարիներին հաջորդաբար ընդունվեցին փաստաբանությանն առնչվող մի շարք օրենսդրական ակտեր: Ի սկզբանն ԽՍՀՄ-ում ինստիտուտը գուրկ էր ինքնուրույնությունից, փաստաբանական գործունեություն իրականացնող մարմինները գտնվում էին այս կամ այն կառույցի իշխանության ներքո:

ԽՍՀՄ ավելի քան 190 մկն բնակչության պայմաններում կար ընդամենը՝ 8000 փաստաբան:

ՀԽՍՀ մոտ 70 տարիների ընթացքում խեղաքյուրվեց փաստաբանության՝ որպես ազատ, ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ինստիտուտի, դերն ու նշանակությունը: ԽԽՍՀ-ում փաստաբանության և փաստաբանների նկատմամբ բացակայում էր պատշաճ վերաբերմունքը: Միակուսակցական համակարգը սահմանափակում էր քաղաքացիների, այդ բվիմ՝ փաստաբանների իրավունքները: ԽԽՍՀ-ում փաստաբանության հասկացության խեղաքյուրման իիմնական պատճառն այն էր, որ օրենքներում ամրագրված առաջանցիկ իրավական զաղափարները չեին համապատասխանում խորհրդային իրականությանը, օրինակ, 1939թ. «Պաշտպանների կոլեգիա» եզրույթը փոխարինվեց «Փաստաբանների կոլեգիա» եզրույթով, բայց եզրույթների նման փոփոխումն ինստիտուտի որևէ փոփոխության չհանգեցրեց:

1979թ. նոյեմբերին ընդունված ԽԽՍՀ-ում «Փաստաբանական ծառայության մասին» ԽԽՍՀ օրենքով ավարտվում էր ՀՀ-ում փաստաբանության զարգացման երկրորդ փուլը, թեև օրենքը շարունակեց գործել նաև նորամկախ ՀՀ-ում, մինչև 1998թ. «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

1991թ. Հայաստանի Հանրապետության հոչակմամբ սկիզբ դրվեց իրավական նոր համակարգի, որը թեև ՀԽՍՀ իրավական համակարգի ժառանգորդն էր, սակայն նախատեսում էր իրավունքների և ազատությունների ավելի լայն շրջանակ: 1995թ. ՀՀ սահմանադրությամբ առանձին հոդվածով նախատեսված չէ փաստաբանական ծառայությունը, սակայն ամրագրված են իրավաբանական օգնություն ստանալու, ճերրակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունքները (40-րդ հոդված), ինչն էլ ենթադրում է փաստաբանական ծառայության գոյությունը:

ՀՀ-ում փաստաբանության կայացման համար էական նշանակություն ունեցավ 1998թ.-ի «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որում նշված էր հետևյալը. «ՀՀ տարածքում փաստաբանական գործունեության իրականացման կարգը որոշվում է քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգործով, սույն օրենքով և այլ օրենքներով», ըստ այդ էլ կարևորվում էր նաև նույն թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգործի դերը:

Միջազգային պայմանագրերի կնքումով ու միջազգային դատարանների ի հայտ գալով՝ ձևադրվեց փաստաբանական գործունեության նոր սապարեզ, ընդլայնվեցին փաստաբանների հնարավորությունները, միաժամանակ աճեցին մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող պահանջները: Առաջացավ համապատասխան օրենսդրության բարելավման անհրաժեշտություն: Այսպես, 2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը եկավ փոխարինելու 1998թ. «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքին:

Փաստաբանության գարգացման նախադրյալները ՀՀ-ում

Փաստաբանությունը, ինչպես ցանկացած սոցիալ-իրավական ինստիտուտ, ենթարկվելով դիակելիքի օրենքներին, գտնվում է փոփոխման, գարգացման գործընթացում: Սահմանադրական և օրենսդրական բարեփոխումները, միջազգային պայմանագրերի կնքումը և միջազգային կազմակերպություններին անդամագրվելը կարող են զգալի փոփոխություններ առաջացնել փաստաբանության ինստիտուտի կառուցվածքում:

2005թ. նոյեմբերից ՀՀ-ում սկսվեց օրենսդրական դաշտի՝ սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցման գործընթացը:

2007թ. աշբի ընկավ օրենսդիր մարմնում դատարանակազմության նախանձը պատճենագործության մասին և պրոցեսուալ վարույթին առնչվող օրենսդրական նախագծերի բուռն քննարկմամբ, ՀՀ-ում վարչական հաստուկ վարույթի ներմուծմամբ: Ստեղծվեցին հաստուկ հանձնախմբեր քրեական և քաղաքացիական դատավարական օրենսգրքերի բարելավման համար: ՀՀ-ում իր կիրառումը գտավ արագացված դատաքննությունը¹, որի պարագայում ավելի է կարևորվում պաշտպանի դերը: Այստեղ հիմնական ուշադրությունը հարկավոր է բենու նախնական քննության փուլին: Դատական քննության փուլում մեղադրողը և փաստաբանն ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ: Նույնը չի կարելի ասել նախնական քննության փուլի մասին: Թեև պաշտպանն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերել իր պաշտպանյալի անմեղությունն ապացուցող փաստեր, բայց մեղադրող կողմից հնարավորությունները զգալիորեն գերազանցում են պաշտպանող կողմից հնարավորություններին: Արտասահմանյան երկրներում գործող մասնավոր խուզարկուի ինստիտուտը պաշտպանին ապացույցների ձեռքբերման հնարավորություն է ընձեռում, բայց հայկական մենքայիտեափ պայմաններում անհնար է այդ ինստիտուտի ներմուծումը մերօրյա Հայաստանում: Դրա փոխարեն, օրենսդրական բարեփոխումների արդյունքում կարելի է ընդունել պաշտպանի իրավունքները, թեկուզ միայն արագացված դատաքննության պարագայում:

2007թ. ՀՀ-ում առաջ քաշվեց մասնագիտական դատարանների ստեղծման նախագիծը: Մասնագիտական դատարանների առկայության պարագայում կարևորվում է փաստաբանների մասնագիտացվածությունը իրավունքի կոնկրետ ճյուղում՝ նկատի ունենալով, որ իրավունքի ճյուղերն այսօր բաղկացած են բազմաթիվ ենթաճյուղերից:

Հին աշխարհում մեկ մարդը կարող էր տիրապետել ժամանակի բոլոր գիտական գիտելիքներին: Այսօր անգամ մեկ մասնագիտությունն այնքան նրբություններ է պարունակում, որ կարիք է առաջանում նեղ մասնագիտացվածության: ՀՀ-ում փաստաբանները հիմնականում գործում են՝ ունենալով մի քանի մասնագիտացվածություն:

2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում նշված են սկզբունքներ (անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքները), որոնք ընդհանուր են ինչպես զարգացած ժողովրդավարություն ունեցող, այնպես էլ երիտասարդ ժողովրդավարությամբ պետությունների համար:

¹ ՀՀ արագացված դատաքննության ինստիտուտը հիշեցնում է ԱՄՆ-ում ընդունված «Սեղբի ընդունման գործարքը», սակայն այն ադապտացված է հայաստանյան իրավական դաշտին:

Այդ սկզբունքները չեն համապատասխանում մերօրյա հայ իրականությանը: Նշված խնդրի պատճառը հիմնականում պայմանավորված է ոչ այնքան օրենսդրական բացերով ու պետական քաղաքականությամբ, որքան հասարակության իրավագիտակցությամբ: Բացը լրացնելու համար հարկավոր է ունենալ քաղաքացիական հասարակություն, որի կայացմանը նպաստող ինստիտուտներից է ՀՀ փաստաբանների պալատը: Ստացվում է փակ օդակ, որի ելքը փաստաբանների պալատի կողմից իր գործունեության ընդլայնումն է, հատուկ դասընթացների կազմակերպումը ոչ միայն պալատի անդամների, այլև քաղաքացիների համար: Առաջին հայացքից այս քաղաքականությունը կարող է բվալ բարդ և անշնորհակալ, բայց մեկ տասնամյակում արդեն կտա իր ծիլերը և պալատի զարգացմանն ուղղված այլ միջոցառումների շարքում կարևոր դեր կունենա փաստաբանության կտրուկ վերելքի համար: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարձր իրավագիտակցություն ունեցող հասարակության քաղաքացիները, հականալով փաստաբանական ծառայության կարևորությունը, ավելի հաճախ են օգտվում վերջինից, քան ՀՀ-ում և այլ երիտասարդ ժողովրդավարություն ունեցող երկրներում:

Փաստաբանության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև ՀՀ փաստաբանների պալատի համագործակցությունը տարբեր երկրների նմանատիպ կառույցների հետ: «Փաստաբանութան մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է նման հնարավորություն: Ընդհանուրապես, յուրաքանչյուր ինստիտուտում համագործակցությունը, զարափարների փոխանակումը, համատեղ ուժերով ծրագրերի մշակումը նպաստում է ինստիտուտի զարգացմանը: Ինչ վերաբերում է փաստաբանությանը, ապա այստեղ առանձնապես է կարևորվում համագործակցությունը: Այն կարելի է դիտարկել 2 ասպեկտով,

- ՀՀ փաստաբանների համագործակցություն և առողջ մրցակցություն (փաստաբանական էթիկայի պահպանում),
- համագործակցություն միջազգային ասպարեզում, քանի որ չնայած գլոբալիզացիայի վտանգին, մարդու իրավունքների պաշտպանության գործում համանման օրենսդրության կիրառությունը լավագույն հիմքն է մարդու իրավունքների պաշտպանությամբ գրավվող ինստիտուտների զարգացման համար:

Փաստաբանության զարգացումը ՀՀ-ում առավելապես կարևոր է, քանի որ այս ինստիտուտը զարգացման համար ուներ ընդամենը 16 տարի:

Եզրափակիչ նաս

Մարդկության գարգացման պատմության ընթացքում բավական երկար ժամանակ այս կամ այն բնագավառում ձեռքբերումները համարվում էին լավագույնը և բյուր կարծիք էր ստեղծվում, որ ավելին հասնելն անհնար է: Գյուղությունը փշրեց նման մոտեցումները, փիլիսոփաները սկսեցին մշակել պետության գարգացման հեռանկարներ: Կարևորվեցին մարդկանց իրավունքները, սակայն խիստ անտարբնիստական հասարակությունում միայն սոցիալական մի խմբի շահերն էին պաշտպանվում:

Այսօր յուրաքանչյուր որ ունի իր իրավունքների պաշտպանության հնարավորություն: Գոյություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության բազմաթիվ հնատիտուտներ, որոնք, սակայն անընդհատ վերակառուցվում և բարեփոխվում են:

Դժվար է ասել, թե փաստաբանությունն արդյո՞ք կհասնի իր գարգացման գագարնակետին, սակայն յուրաքանչյուր ժամանակաշրջանում կարելի է մշակել տվյալ ժամանակի համար հնարավորինս կիրառելի օրենսդրություն: Առաջանցիկ գաղափարների ամրագրումը չի կարող հանգեցնել դրական փոփոխությունների, եթե մնա թղթի վրա: Դրա համար փաստաբանների պալատի առաջ կարևոր առաջադրանք է դրված ինստիտուտի վերաբերյալ օրենսդրական իդեալները վերածել իրականության:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է տալ փաստաբանության գարգացման մերօրյա ուղենիշները: Դրանք են՝

1. պատմական փորձի օգտագործում,
2. օրենսդրական բարեփոխումների արդյունքում փաստաբանի դերի մեծացում,
3. կայուն սկզբունքների կողքին ճկուն մեխանիզմների կիրառում,
4. քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված քայլերի ձեռնարկում,
5. համագործակցություն:

Իհարկե, հնարավոր է թվարկել փաստաբանության գարգացման տասնյակ ուղղություններ, սակայն կարևոր է գարգացման իրատեսական գաղափարների և ծրագրերի առաջադրումը:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով)
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12.2004թ.

Մասնագիտական գրքեր

- Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Հ. Դուկայան, Երևան, 2001թ.
- Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Ա. Արշակյան, Երևան, 2003թ.
- Հայ իրավական մտքի գանձարան, Ռ. Ավագյան, Երևան, 2002թ.
- Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 12, Երևան, 1986թ.

Ինտերնետային կայքեր

- www. pastaban. am
- www. concourt. am

ԻԳՈՐ ԱՎԱԿՅԱՆ

Ներածություն

Երիտասարդներս, կրթվելով, ճգոտում ենք մշակույթի և ստեղծագործության նոր ձևերի, ծարավի ենք նոր մոդելների և խորհրդանշների: Այս գիտաժողովի կազմակերպումը իրոք արժանի է մեր ճգոտմանն ու խանդավառության՝ գտնելու սեփական ուժերը փորձելու բնագավառ, որը մեզ հնարավորություն է տալիս ինքնադրսալորդելու: Դեպի իր ապագան ընթացող մարդկության երկար ճանապարհին ի՞նչը կարող է մեզ համար ավելի կարևոր լինել, քան մարդու իրավունքների ապահովումը, դրանց առաջնահերթ նշանակություն տալը մարդկության ճգոտումներում և գալիք նվաճումներում:

Իսկ այդ իրավունքների պաշտպանությունն էլ իրականացնում է փաստաբանությունը, որը իրավաբան ուսանողների հանրապետական 4-րդ գիտաժողովի թեման է:

Մարդկային կյանքը և մարդկային արժանապատվությունն արհամարհվել և ունահարվել են ողջ պատմության ընթացքում: Այդ պատկերը չի փոխվել նաև այսօր: Այնուամենայնիվ, այդպիսի նորմեր կիրառելու գաղափարը, որոնք միասնական կլինեին բոլոր մարդկանց համար առանց որևէ խտրականության, ծնվել է շատ հարյուրամյակներ առաջ:

Իսկապես չի եղել այնպիսի հասարակություն, որը չունենար որոշակի իրավունքների պաշտպանությունն ապահովող կանոններ:

Փաստաբանությունը որպես ինքնանպատակ ստեղծված ինստիտուտ և պետական համակարգի կցորդ չէ: Դրա ստեղծումը պայմանավորված է հասարակական անհրաժեշտությամբ, որն էլ հիմք է հանդիսացել փաստաբանության ձևավորման և հետագա զարգացման համար:

Փաստաբանությունը միշտ եղել և մնում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ, որի առաքելությունն է հանդիսանում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև աջակցությունը արդարադատության իրականացման հարցում:

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության զարգացումն ու կատարելագործումը բավական բարդ, դժվար և երկար ճանապարհ է ընթացել: Ուրսունինգ տարվա պատմություն ունեցող Հայաստանի փաստաբանությունը շարունակվում է ինքնահաստատվել, կայանալ իր դերում՝ որպես ինքնուրույն, անկախ, բայց հասարակությունից չառանձնացված՝ նրա շահերին ծառայող ինստիտուտ, մարմն:

Փաստաբանության զարգացումը բերեց նրան, որ փաստաբանական գործունեությունը վերաճեց ավելի մեծ զաղափարի՝ փաստաբանության՝ ի դեմս Հայաստանում գործող մեկ միասնական Փաստաբան-ների պալատի:

Պետք է նշել, որ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումները դեռևս լիովին չեն ապահովում փաստաբանական գործունեության առկա խնդիրների լուծման արդյունավետությունը: Դրանք կարող են հաղթահարվել միայն փաստաբանների անընդհատ կատարելազործմամբ՝ ուսուցմամբ և վերապատրաստմամբ: Արդի հասարակական կյանքը նոր իրամայական պահանջմանը է ներկայացնում հանրապետության իրավաբանական կրթության, այդ քվում նաև բուհական համակարգին, իրավաբանի մասնագիտությանը:

Նկարագրական նաև

Փաստաբանության պատմական զարգացման հիմնական ուղենիշները Հայաստանում

Հայաստանում փաստաբանության պատմական զարգացման հիմնական ուղենիշների ուսումնասիրումն անհրաժեշտ է սկսել Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանից:

Հովհաննես Քաջազնունու դեկավարած կառավարությունը ծրագրային հայտարարության մեջ արդարադատության ոլորտում իր խնդիրն էր համարում «հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացման և իրավական սովորույթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից դարձնելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացուցիչներին»:

Պետք է նշել, որ այդ ժաման իրավիճակում կառավարությանը այդքան էլ չէր մտահոգում պաշտպանների ինստիտուտի ձևավորումը: Առկա խնդիրների բազմազանությունը և երկրի ճգնաժամային իրավիճակը բույլ չէր տալիս անդրադառնալ նման հարցերի կարգավորմանը: Այնուհանդերձ, որպես պաշտպաններ դատարանում բույլատրված էր հասարակական ներկայացուցիչների մասնակցությունը: Այսպիսով՝ հանրապետության արդարադատության կառուցման գործընթացում որոշակի փորձ էր կատարվել հիմնելու փաստաբանություն կամ ավելի ճիշտ կինի ասել պաշտպանների ինստիտուտ, սակայն առաջին սահմանադրությունը դատարանում անձի շահերի պաշտպանության մասին որևէ դրույթ չէր պարունակում:

Այնուհանդերձ, Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, հիմք ընդունելով Ռուսաստանի Բարձրագույն Կենտրոնական կողմից ընդունված «Աղվոկատուրայի մասին կանոնադրությունը», իր երրորդ նստաշրջանում ընդունեց «ՀԽՍՀ դատարանակազմության կանոնագրքի հաստատության մասին» որոշումը:

Նշված որոշմամբ հաստատված կանոնագրքի 6-րդ գլուխը վերաբերում էր պաշտպանների կողեզիային: Դատարանակազմության կանոնագիրը սահմանեց, որ Գլխավոր Դատարանին առընթեր գործում է քրեական և քաղաքացիական գործերի պաշտպանների կողեզիան: Պաշտպանների կողեզիայի անդամները իրավունք չունեին պաշտոնավարել պետական հիմնարկություններում և ձեռնարկություններում:

Այստեղ որոշակի բացառություններ էին սահմանվել, մասնավորպես, պետական պաշտոն վարողների համար, իրավաբանական գիտությունների պրոֆեսորների ու դասախոսների և պետական մարմինների իրավագեն խորհրդականների համար՝ ամեն մի առանձին դեպքում Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի հասուլ թույլտվությամբ:

Ուստի մասիրողներին համար վերոշարադրյալից պարզ է դառնում, որ պաշտպանների կողեզիան ոչ միայն անկախություն չուներ, այլ նաև ամբողջությամբ հանդիսանում էր իշխանություններին կից մարմին և որպես կամակատար:

Միաժամանակ 1923թ. քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված էր դրույթ, որով պաշտպանի մասնակցությունը բոյլատրվում էր սկսած դատական ըննության փուլից:

Հարկ է նշել, որ 1922-1939թթ. ժամանակաշրջանում պաշտպանների կողեզիան գործեց կազմակերպչական ու գործառությալին մեծ քերություններով առկա դրույթների հիմնան վրա: Չնայած դատական համակարգում արագ կատարվող բարեփոխումներին՝ կողեզիայի գործունեության կարգավորումը այդ ժամանակահատվածում որևէ լուրջ փոփոխությունների չենթարկեց և ընդանուր առմամբ մատնված էր անուշադրության:

Ժամանակի ընթացքում արդարադատությունն արդեն իսկ վերածվել էր մի ուժեղ կառույցի, որին ենթարկվում էին Գերագույն դատարանը (Գլխավոր դատարանը վերացվեց և ստեղծվեց վերը նշված դատարանը)՝ իր կողեզիաներով, ժողովադատաները, դատախազությունը և դատապաշտպանների կողեզիան:

1922-1939թթ. կարելի է համարել Հայաստանում փաստարանության ինստիտուտի ձևավորման առաջին փուլը:

1928թ. Արդարադատության ժողովականացման իր գործունեության հաշվետվությունում դատապաշտպանների կողեզիայի գործունեության

Վերաբերյալ նշում էր հետևյալը. «Դատապաշտպանների կոլեգիայի աշխատանքները բավարար չափով ժողովրդականացված չեն, դատապաշտպանների կաղըրը թարմացված չէ, նոր ուժեր ասպարեզ չեն քաշված: Բավարար չի կարելի համարել նաև կոնսուլտացիոն աշխատանքները, այսինքն՝ բնակչությանը իրավաբանական օգնություն ցույց տալու գործը, մինչդեռ հենց այս աշխատանքը դատապաշտպանների կոլեգիայի հիմնական անելիքներից մեկն էր: Այս բացերը վերցնելու համար Արդիոկոմատի կողմից համապատասխան միջոցներ ձեռնարկվեցին: Դատապաշտպանության ասպարեզում աշխատողների թիվն էր 34-ը՝ ամբողջ հանրապետության մեջ:

Իհա այսպիսի խղճուկ վիճակում էր գտնվում փաստաբանությունը այս ժամանակահատվածում, որը հիմնականում պայմանափրկված էր օբյեկտիվ պատճառներով: Նշված իրողությունը տրամարանական էր, քանի որ հասարակության շահերի պաշտպանության առաքելություն իրականացնող կառույցն իրականում որևէ առնչություն չուներ հասարակության հետ և ամբողջությամբ կախված էր պետական մարմանի որոշումներից: Իսկ պաշտպանների կոլեգիա ընդունելության խիստ կարգը, այդ մասնագիտության անհարգի լինելը, ինչպես նաև դատարանում պաշտպանի գործունեության նվազագույն արդյունավետությունը չեն կարող նպաստել պաշտպանների թվի ավելացմանը:

Ինչպես փաստաբանության օղակներից դուրս, այնպես էլ դրա ներսում փաստաբանները տառապում էին իրավական նիհիլիզմով: Օրենքի նկատմամբ հարգանքի բացակայությունը, իրավաբանների նկատմամբ համընդիանուր ատելությունը բնորոշ էին խորհրդային ողջ ժամանակաշրջանի ընթացքում, սակայն երբեք այն այդքան մեծ չի եղել, որքան խորհրդային իշխանության առաջին երկու տասնամյակի ընթացքում:

1939-1961թթ. կարելի է համարել Հայաստանում փաստաբանության ձևավորման երկրորդ փուլը: 1939թ. օգոստոսի 16-ին «ԽՍՀՄ Աղվոկատուրայի կանոնադրությունը» հավանության արժանացավ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից: Այն կարգավորում էր մոտ 8.000 փաստաբանների գործունեությունը: Պաշտպանների կոլեգիաներին եկան փոխարինելու փաստաբանների կոլեգիաները:

Նշենք, որ 1939թ.-ին ՀԽՍՀ Արդիոկոմիսարում ստեղծվել էր աղվոկատուրայի բաժին, որի պետն էր Զաքոյանը՝ հայկական փաստաբանության հիմնադիրներից մեկը:

Փաստաբանների կոլեգիաները փաստաբանությամբ զբաղվող անձանց կամավոր միավորումներ էին, որոնց գործունեության հետ կապված բոլոր հարցերը լուծում էր կոլեգիայի անդամների և նախագահության ընդհանուր ժողովը:

Կոլեգիայի անդամ չէին կարող դառնալ այն անձինք, որոնք գրկված էին ընտրական իրավունքից, ունեին դատվածություն կամ նրանց վերաբերյալ կայացված էր որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում:

Նկատենք, որ փաստաբանության շարքերի ընդունելությունը գտնվում էր իշխանությունների մշտական հսկողության ներքո, որն անընդհատ ուժեղացվում էր: Փաստաբանական գործունեության բնագավառում մի շարք սահմանափակումներ մտցվեցին: Առաջնահերթորեն դա վերաբերվում էր ռեպրեսիաների ժամանակաշրջանին, երբ մի շարք որոշումներով փաստաբանների մասնակցությունը չէր թույլատրվում ահարեւկչական կազմակերպությունների և ահարեւկչությունների, ինչպես նաև հակահեղափոխական դիվերժիաների գործերով դատարնություններին:

Այնուհետև, Սեծ Հայրենական պատերազմն իր հետքը բռնկեց փաստաբանների գործունեության վրա:

Փաստաբանների քանակը նվազեց՝ կապված նրանց քանակ գորակոչման և քանակի շարքերը կամավոր համալրման հետ:

Ստալինի մահից և ռեպրեսիանների ժամանակաշրջանի ավարտից հետո՝ Խրուչչովյան տարիների հետ մեկտեղ, օրենսդիր մարմնի դիրքը փաստաբանների իրավունքների հանդեպ խորականություն սահմանող օրենքների նկատմամբ սկսվեց որոշակիորեն փոխվել:

1961-1991թ. Հայաստանում փաստաբանության ձևավորման երրորդ փուլն էր: 1961թ. մարտի 7-ին օրենքով հաստատվեց «ՀԽՍՀ փաստաբանների կանոնադրությունը»:

Նոր կանոնադրությամբ փաստաբանների կոլեգիան դուրս բերվեց Արդարադատության նախարարության ենթակայությունից և նրա գործունեության դեկանալումը վերապահվեց ՀԽՍՀ նախարարների խորհրդին: Կոլեգիայի կառուցվածքն ընդհանուր առմամբ որևէ զգայի փոփոխությունների չենթարկվեց, այն ինչպես և նախկինում, բաղկացած էր կոլեգիայի անդամների ընդհանուր ժողովից, նախագահությունից, վերատուգող հանձնադրությունից:

Այս կանոնադրությունը այլևս բացառություններ չէր նախատեսում, սահմանելով, որ փաստաբանական գործունեությամբ կարող էին գրադարձել միայն փաստաբանների կոլեգիայի անդամներ հանդիսացող անձինք:

1961թ. կանոնադրությամբ սահմանվում էր կոլեգիայի անդամների ընդունելության ու հեռացման հստակ կարգ, որի իրավասությունը նախկինի պես վերապահված էր նախագահությանը: Սահմանվում էին նաև փաստաբանների իրավունքները և պարտականությունները:

Կանոնադրությամբ առաջին անգամ սահմանվեցին փաստաբանների այնպիսի պարտականություններ, ինչպիսիք են՝ «Փաստաբանը չպետք է հրապարակի իրավաբանական օգնություն ստանալու կապակցությամբ իրեն հաղորդած տեղեկությունները» և «Փաստաբանն իրավունք չունի իրաժարվել մեղադրյալի՝ իր ստանձնած պաշտպանությունից»:

1961թ. կանոնադրությունը, ըստ էության, ընդլայնեց փաստաբանների կողեզրաների ազատությունը, ինչը լուրջ խթան հանդիսացավ Հայաստանում փաստաբանության և փաստաբանական գործունեության զարգացման, ինչպես նաև փաստաբանների քանակի ավելացման համար:

1980թ. ընդունվեց նոր կանոնադրություն, որը բավականին առաջդիմական էր քան նախկինը, մասնավորապես, հաշվի էին առնված միջազգային իրավունքի մի շարք նորմեր:

Հանրապետության 1990-ական թթ. պատերազմական և տնտեսական ճգնաժամի իրավիճակից դրուս գալուն գուգրներաց սկսեցին զարգանալ նաև տնտեսական հարաբերությունները, ինչը պահանջում էր նոր օրենսդրության ընդունում, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին իրավական օգնության տրամադրման որոշակի բարելավում:

1998-2005թթ. ՀՀ փաստաբանության համակարգում իրականացված բարեփոխումները համարվում են Հայաստանում փաստաբանության ձևավորման չորրորդ փուլը, որի հիմքում ընկած էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40-րդ և 93-րդ հոդվածներում փաստաբանական գործունեության ամրագրումը:

Հիմնվելով այս հոդվածների վրա՝ 1998թ. հունիսի 18-ին ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը:

Նշված օրենքը իրավունք էր տախու ստեղծել մի քանի փաստաբանական միություններ, որոնց ստեղծման համար հիմնադիր ժողովին պետք է մասնակից լինեին առնվազն 50 հիմնադիր փաստաբաններ:

Փաստաբանների կողեզրայի իրավահաջորդ էր ճանաչվում Հայաստանի Հանրապետության փաստաբանների միությունը, որը պետք է փաստորեն հիմնադրվեր առաջին:

Այս օրենքի համաձայն՝ փաստաբան էր համարվում այն անձը, ով օրենքով սահմանված կարգով ստացել էր փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր: Փաստաբանը չէր կարող լինել պետական ծառայող:

Համաձայն «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ ստեղծվում էին փաստաբանների միության հետևյալ մարմինները.

1. ընդհանուր ժողով,
 2. մշտապես գործող դեկազար մարմին (վարչություն, խորհուրդ և այլն),
 3. կարգապահական հանձնաժողով,
 4. վերատուգիչ հանձնաժողով:
- Նկատենք, որ նախկին կոլեգիայի կառուցվածքից միության կառուցվածքը տարբերվում էր միայն նոր մարմնով՝ կարգապահական հանձնաժողովով:

Փաստաբանության և փաստաբանական գործունեության եռթյունը, նպատակները և խնդիրները: Փաստաբանի իրավական կարգավիճակը

Փաստաբան (լատ. advocates) նշանակում է «օգնության կանչված» իրավաբան, որը խորհրդատվությունների, միջնորդությունների, պաշտպանության միջոցով մասնագիտական իրավական օգնություն է ցույց տալիս կասկածյալներին, մեղադրյալներին, ամրաստանյալներին, դատապարտյալներին նախարանության և դատաքննության փուլերում, ներկայացնում է տուժողների շահերը և այլն:

Ներկայացնության և պաշտպանության կազմակերպման բարձրագույն ձևը, այսինքն՝ փաստաբանությունն առաջացավ պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո:

Փաստաբանի իրավական կարգավիճակը բոլյ. է տալիս ասհնանել «փաստաբանություն» հասկացությունը ժամանակակից ձևով և կարելի է ասել, որ փաստաբանությունը փաստաբանի կարգավիճակ ստացած և փաստաբանական գործունեությամբ զբաղվող անձանց մասնագիտական միավորումն է: Ներառված չինելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ՝ փաստաբանությունը պետք է ծառայի քաղաքացիական հասարակությանը, որի միջոցով հասարակությունը հավասարակշռություն է պահպանում հասարակական ու պետական շահերի և առանձին քաղաքացիների շահերի միջև:

Փաստաբանությունը իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանության հիմնական նպատակներն են՝

1. վատահորդների շահերի պաշտպանությունը, նրանց որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը օրենսդրությամբ, բարյական և էթիկական նորմերով սահմանված կարգով,
2. քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդումը, օրենքի տարի և ոգու, այսինքն՝ օրինականության պահպաննան ապահովումը:

Անձանց շահերի ներկայացնուցչությունը սահմանադրական, քրեական, վարչական, քաղաքացիական և տնտեսական դատավարություններում ուղղված է ոչ միայն մեկ մասնավոր անձի շահերի բավարարմանը, այլև դատաքննության վիճարկելիության սկզբունքի ապահովմանը, ճշմարտության նվաճմանը, անձանց և քաղաքացիների շահերի պաշտպանությանը և իրավական, ժողովրդավարական պետության կայացմանը, ինչը հռչակված է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով, որն էլ ունի կարևոր նշանակություն, ինչպես առանձին անձանց համար, այնպես էլ ողջ հասարակության:

Հետևաբար, փաստաբանության գործունեության ընթացքում որակյալ իրավաբանական օգնության տրամադրման ժամանակ առկա են և' մասնավոր շահը՝ կոնկրետ վատահորդի խախտված իրավունքի վերականգնումը, և' հանրային շահը՝ ողջ հասարակության շահը, կապված քաղաքացիական հասարակության ծևավորման հետ:

2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով Հայաստանում առաջին անգամ փորձ կատարվեց հասարակությունում ծևավորելու «փաստաբան» կոչման (որակավորման) մասին ճիշտ պատկերացում, իսկ փաստաբանների գործունեությունը համապատասխանեցնել նրանց կոչմանը: Մասնավորապես, օրենքի 17-րդ հոդվածով սահմանվեց.

«Փաստաբան է համարվում այն անձը, որը սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում»: Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու:

Փաստաբանի գլխավոր գործառույթը իրավաբանական օգնության տրամադրումն է:

Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր.

- կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստարդեր, ինչպես նաև դրանց նախագծեր.
- որպես վատահորդի ներկայացուցիչ մասնակցում է քաղաքացիական դատավարությանը, մասնակցում է գործի քննությանը ՀՀ Սահմանադրական դատարանում.
- որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախստումների գործերով վարույթին.
- ներկայացնում է վատահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետություններում:

Քաղաքացիական և քրեական դատավարությունում, ինչպես նաև վարչական իրավախստումների վերաբերյալ վարույթում, որպես վատահորդի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստարանի իրավունքները սահմանվում են օրենքով:

Փաստաբանը, մասնավորապես, իրավունք ունի՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով ներկայացնելու կամ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, ինչպես նաև ներկայացնելու վատահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում.
- օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վատահորդի շահերից բխող ապացույցներ.
- դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստարդեր ստանալու պահանջով.
- համաձայնության դեպքում գրավոր հարցման ենթարկելու անձանց, ովքեր ենթադրվում են, որ տիրապետում են գործին վերաբերող տեղեկատվությանը, որով փաստաբանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս.
- պայմանագրային հիմունքներով մասնագետներ ներգրավելու՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու համար:

Բացահայտելով փաստաբանի իրավունքները և դրական վերաբերմունք արտահայտելով այդ իրավունքների մասին՝ այժմ անդրա-

դառնանք փաստաբանի պարտականություններին: Փաստաբանի հիմնական պարտականություններն են՝

- ազնվորեն և բարեխճռորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.
- պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.
- չիրապարակել փաստաբանական գաղտնիքը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- մշտապես կատարելագործել իր գիտելիքները.
- մուծել անդամավճարներ.
- չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում առանց նրա հետ համաձայնեցնելով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝

- այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում,
- վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարրերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, եթե՝

- առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդի շահերի միջև,
- տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև, եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որշման ընդունումը,
- ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը,
- պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Նկատենք, որ փաստաբանը պետք է դադարեցնի իրավաբանական օգնություն ցոյց տալ երկու կամ ավելի անձանց, եթե նրանց շահերի միջև առաջանում է հակասություն:

Վաստակողն իրավունք ունի ցանկացած պահի իրաժարվելու փաստաբանի ծառայությունից՝ փոխհատուցելով նրա արդեն մատուցած ծառայության դիմաց:

Փաստաբանն իր մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, մասնագիտական վարքագծի կանոնները խախտելու պարագայում ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական վարույթը հարուցվում է գրավոր հաղորդումների, ԶԼՄ-երի իրավարակումների հիման վրա և քննարկվում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի կողմից, որն ել կայացնում է համապատասխան որոշում:

Փաստաբանական գործունեություն իրականացնելու համար անձը պետք է ստանա արտոնագիր, որի համար անհրաժեշտ է բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավաբանի մասնագիտությամբ զիտական աստիճան և իրավաբանի մասնագիտությամբ առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, ինչպես նաև հանձնել է որպակվորման քննություն և ստացել համապատասխան վկայագիր:

Առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս:

Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնագրով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ: Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական ուժերի, ԶԼՄ-ների, օլիգարքների միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

Փաստաբանը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, ներառյալ իր մասնագիտական պլարտականությունները բարեխիղճ կատարելիս, կամ թե՝ դատարանում, հետաքննության, ճախաքննության և այլ մարմիններում հայտնած կարծիքի և դիրքորոշման համար: Այս նորմերը, որոնք սահմանված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում այն լրջագույն երաշխիքներ են հանդիսանում, որոնք հնարավորություն են ընձեռում կյանքում իրականացնելու ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի բովանդակությունը, որտեղ, մասնավորապես, ասված է.

«Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»:

Փաստաբանի՝ որպես քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուտի, իր առաքելության պատշաճ իրականացման համար էական նշանակություն ունի նրա իրավական պաշտպանությունը։ Այս մասին է խոսվում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում, որտեղ սահմանված է՝ «Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո»։

Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր նաև պահպանությունների կատարման հետ կապված նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացման կամ այլ անօրինական գործողություններով։

Հարկ է նշել, որ փաստաբանի իրավական պաշտպանության և անկախության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը պայմանապիրված է այն հանգամանքով, որ գործի քննության ժամանակ հաճախ փաստաբանը տեղեկանում է այնպիսի փաստերի, ապացույցների ու նյութերի, որոնք վստահորդ չեն ցանկանա հրապարակել։ Այսպիսի տեղեկությունները կոչվում են փաստաբանական գաղտնիք։ Հենց այդ գաղտնիքը չհրապարակելու տեսանկյունից էլ փաստաբանները հաճախ ենթարկվում են զանազան ոտնեցությունների։

Փաստաբանության դերը քաղաքացիական հասարակության ամրապնդման և իրավական պետության կայացման գործում

Մենք արդեն այս աշխատության մեջ նշեցինք, որ փաստաբանությունը պետական կամ տեղական համակարգի մաս չի կազմում։ Փաստաբանությունն անհրաժեշտ է հասարակությանը և ստեղծվել է հենց հասարակության պահանջմունքներից եմելով և նրանց պահանջով։ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ, «Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա»։

Կարևոր է հասկանալ, որ պաշտպանը պաշտպանում է անձանց ոչ թե օրենքից, այլ նրանց նկատմամբ օրենքի խախտումների հնարա-

Վոր դրսնորումներից և ոչ ավելին, այսինքն՝ իր գործողություններով փաստաբանը նպաստում է օրինականության ամրապնդմանը, օրենքի, օրինականության և պետության հանդեպ քննակշության վստահության մակարդակի բարձրացմանը:

Քաղաքացիական հասարակությունն ընկալվում է որպես մարդկանց գիտակցման անհրաժեշտ և արդյունավետ միջոց, որը հիմնված է բանականության, ազատության իրավունքի և ժողովրդավարության վրա:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ փաստաբանությունը հանդիսանում է որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ:

Եթե քրեական դատավարությունում մեղադրանքը ներկայացվում է պետության կողմից, ապա պաշտպանությունն իրականացվում է հասարակության կողմից և հանդիսանում է իրավունքի չափից դուրս բացարձականացման զապոլ գործոն՝ բույլ չտալով իրավական պետությունը վերածել ուստիկանականի: Այդ իսկ պատճառով էլ պատահական չէ, որ փաստաբանությունը համարվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ:

Հոգեբանության, բարոյականության, էթիկայի և հեղինակության դերը փաստաբանական գործունեությունում

Հենց սկզբից նշենք, որ փաստաբանը պաշտպանում է ոչ թե հանցագործությունը, այլ՝ մարդուն: Հոգեբանական տեսանկյունից փաստաբանական գործունեության առավել բարդ տեսակ է քրեական գործով կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, դատապարտյալի իրավունքների պաշտպանությունը ինչպես նաև նաև համարվում է քննության փուլում, այնպես էլ դատարանում:

Վստահորիդի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի հոգեբանական շփումը, ինչն էլ պայմանավորում է վերջինիս և փաստաբանի միջև առկա վստահության մակարդակը:

Սոցիալական կարգավորման, այդ թվում և բարոյաէթիկական կարևորագույն քաղադրատարրն է բարոյական գիտակցությունը:

Պետք է նկատի ունենալ, որ իրավաբանի մասնագիտական բարձր բարոյական գիտակցությունը պայմանավորված է ինչպես հասարակության ընդհանուր, ամբողջական մշակույթի, այնպես էլ նրա կառուցվածքային բաղադրատարրեր համարվող բարոյական և

իրավական մշակույթի մակարդակով: Որքան բարձր լինեն վերջիններս, այդքան էլ կնպաստեն մասնագիտական բարոյաէթիկական գիտակցության բարձր մակարդակի կայացմանը: Նորմատիվ կարգավորումը, մասնագետներին պարտադրելով նորմահպատակ վարքագիծ, դրանով իսկ մասնագետի գործունեության մեջ հաստատում է կայուն բարոյաիրավական կարգ՝ դուրս մղելով անբարոյականության ու նորմատիվ կանոնների խախտումների դրսերումները: Հաճախ գիտակցության և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության պատճառ է դառնում կրթության բացակայությունը կամ վերջինիս անբարյունավետությունը: Ուստի կարևոր է շեշտը դնել կրթության որակական կողմի բարեկավման վրա: ‘Դրա համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել իրավաբանի՝ փաստաբանի էթիկական ուսուցման ծրագրեր ինչպես բուհական, այնպես էլ հետքուհական կրթական մակարդակներում՝ ընդգրկելով նաև գործող իրավաբաններին:

Կրթությունն ինքնանպատակ չէ, այն կոչված է նպաստել ձևավորելու մասնագիտական էթիկական մշակույթ, եթե էթիկայի սահմանված կանոններն ու նորմերը, պահանջներն ու պայմանները վերածվում են մասնագիտական խմբերի արժեքային կողմնորոշման բաղադրատարրի:

Փաստաբանական գործունեություն իրականացնող իրավաբանը պետք է ունենա բարձր հեղինակություն հասարակության մեջ: Այդ հեղինակությունը ձևավորվում է տարիների ընթացքում, մասնագիտական գործունեության արդյունքում:

Մենք հանոված ենք, որ փաստաբանության զարգացման արդի փուլում կատարված փոփոխությունները բերելու են նրան, որ փաստաբանությունը հասարակության մեջ լինի ամենահեղինակավոր ինստիտուտներից մեկը, բաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտ, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում է:

Այս մասի բովանդակությունը ցանկալի է եզրափակել Նաում Սոնկինին պատկանող հետևյալ աֆորիզմով. «Փաստաբանի արհեստավարժությունը կայանում է ոչ միայն իր անցած փորձի և գիտելիքների կիրառմամբ, այլև նոր գիտելիքներ և փորձ ձեռք բերելու մեջ՝ հանուն ամենաշնորհակալ նպատակի՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության»:

Եզրափակիչ մաս

Փաստաբանությունը՝ որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտ: Վերջին տարիներին աճած ժողովրդանուրյունը վկայում է քաղաքացիների, հասարակության կողմից դրա դերի գիտակցման մասին: Բայց, ցավոք, այդ ըմբռնումը տակավին չի հասել հասարակական գիտակցության ու վարքագծի այնպիսի խորությունների, որնք այդքան անհրաժեշտ են:

Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ ձեռնարկվեն մի շարք միջոցառումներ:

Նախ՝ նշենք, որ օրենսդրությունը այն լրջագույն հենքն է հանդիսանում, որի վրա հենվելով փաստաբանությունը կարող է պատշաճ ձևով իրականացնելու այն առաքելությունը հասարակության մեջ, որը վերապահվում է իրեն:

Բայց դիտարկենք փոքրիկ բացքորում, որը նկատվել է քրեական դատավարության օրենսգրքում:

Մասնավորապես, ուս վերաբերվում է քրեական դատավարության օրենսգրքի այն հոդվածին, որտեղ ասված է, որ փաստաբանն իր կատարած պայալ բացատրությունների համար ենթարկվում է քրեական պատասխանատվության:

Այստեղ բնական և տրամաբանական շատ պարզ մի հարց է առաջանում, ինչու՞ փաստաբանը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նա այդ բացատրությունները լսում է իր վստահորդից (ամբաստանյալից) և բառացի փոխանցում դատարանին: Սա ուղղակի արտուր է:

Մեր կարծիքով սա կաշկանդում է փաստաբանին և լուրջ խոչընդոտ է հանդիսանում փաստաբանական գործնեության իրականացման համար:

Թեպետ նշենք, որ պրակտիկայում այս հոդվածով ոչ մի փաստաբանի նկատմամբ քրեական գործ չի հարուցվել:

Սենք կարծում ենք, որ այս հոդվածի գոյությունը պայմանավորված է այն տիրահոչակ հանգամանքով, որպեսզի «անցանկալի» փաստաբանների վրա փորձեն հոգեբանական ճնշում գործադրել՝ իրենց ձեռքում ունենալով հզոր գենք:

Օրենսդրական ակնառու այլ բացեր մեր կարծիքով չկան:

Նկատենք, որ եթե ընդհանուր օրգանիզմը հիվանդ է, ապա առանձին օրգանների առողջ լինելը օրգանիզմի կենսագործունեության համար այնքան էլ էական նշանակություն չի կարող ունենալ:

Փաստաբանության առողջացման և զարգացման համար նախևառաջ անիրաժեշտ է դատական համակարգի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի կայացումը:

Սեկի ինչպիսիությամբ պայմանավորված է մյուսի ինչպիսիությունը:

Այսպես. մեր շփումը բազմաթիվ քաղաքացիների հետ, որոնք առնչություն էին ունեցել իրենց իրավունքների հետ կապված արդարադատություն իրականացնող մարմինների հետ, այն է՝ դատարանների, բերեց այն համոզմունքին, որ մարդիկ իհասրապիված են ինչպես դատարաններից, այնպես էլ փաստաբանությունից:

Կան փաստաբաններ, որոնք նտավոր ոչ մի լուրջ գործ, կապված իրենց վատահորդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ, չեն կատարում և իրենց գործառույթը վեր է ածվում դատավորին գործար փոխանցող անձի:

Մեր կարծիքով այս երևույթի հիմնական պատճառը հանդիսանում է դատական համակարգի նկատմամբ հասարակության անվատահության առկայությունը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարանները չեն իրականացնում իրենց հիմնական բուն գործառույթը՝ արդարադատությունը, և դատարան դիմած սուբյեկտներն իրենց իրավունքների պաշտպանության հարցի լուծման այլ ճանապարհներ են փնտրում: Հաջորդ պատճառը դա մի շարք փաստաբանների կողմից իրենց իրական դերի զգիտակցումն է, որոնք ցավոր մեծ տոկոս են կազմում:

Կարծում ենք, որ փաստաբանության (և ոչ միայն) աստիճանաբար զարգացումը կրերի նրան, որ այս բացասական երևույթները իսպան կվերանան:

Նշենք, որ փաստաբանության զարգացման լրջագույն պայման կարող է հանդիսանալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի առկայության ապահովումը, որի պարագայում կրարկավոր նաև փաստաբանների սոցիալական դրությունը, ինչը այսօր այնքան էլ բարվոր վիճակում չի գտնվում (չնայած առկա լուրջ առաջընթացի):

Փաստաբանության զարգացման և կայացման համար հաջորդ և հիմնական դեղատումը, որը կարող ենք առաջարկել՝ դատական իշխանության կողմից իրական անկախության ձեռքբերումն է, երբ դատարանները առկա կախվածությունը լիովին կրոթափեն ինչպես գործադիր իշխանությունից, դատախազությունից, այնպես էլ օլիգարխներից և այլ սուբյեկտներից, որոնք ապօրինի ձևով ճնշում են գործադրում դատարանի վրա, և ենթարկվեն միայն օրենքին:

Եվ այս ամենից ելնելով էլ խնդիրը ինքնաբերաբար լուծում կստանա:

Հաջորդ լուրջ թերությունը կապված փաստաբանության հետ, որը նկատվել է մեր կողմից, վերաբերվում է այն հանգամանքին, որ չկա մասնագիտացում: Փաստաբանը կարող է սկսել քրեական գործով իր գործառույթին իրականացնել դիցուք առաջին ատյանի դատարանից և շարունակել ընդհուպ մինչև սահմանադրական դատարանում: Յուրաքանչյուր փաստաբան պետք է մասնագիտանա մի ոլորտում, ասենք, օրինակ, ամուսնալուծության, գույքի բաժանման, ժառանգման, պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով ծագած վեճերի վերաբերյալ գործերով և այլն:

Պարզապես, յուրաքանչյուր փաստաբան ուղղակի ֆիզիկապես ի վիճակի չէ տիրապետելու ամբողջությամբ այդ բոլոր ոլորտներին վերաբերվող գիտելիքներին: Յուրաքանչյուր փաստաբան պետք է ընտրի մասնագիտացման մի ոլորտ: Բայց փաստաբանների զգայի մասը զրայի ածության խնդիրից, նյութական վիճակից ելնելով համաձայնվում են վճարի դիմաց տարրեր ոլորտի գործերում իրականացնելու իրավունքների պաշտպանություն, որի արդյունքում տուժում են մարդու իրավունքները:

Մի կողմ բողնելով իրավաբանի մասնագիտական կրության միշտը հիմնախնդիրները, նշենք, որ ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ներկայումս, իրավաբանական կրությունը չի ապահովում իրավաբանի գործնական հնտությունները: Զինելով ուսանողին տեսական գիտելիքներով, հմացությամբ, այդ կրթական համակարգը չի երաշխավորում գործնական հնտությունների ուսուցմանը, ինչը շատ կարևորվում է մեր կողմից մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ իրականացման ապահովման տեսանկյունից: Իրավաբանի մասնագիտությունն ունի սոցիալ-հանրային, այլ ոչ թե մասնավոր բնույթ: Այդ առանձնահատկությունը պայմանավորում է իրավաբանի մասնագիտական նկարագրի բազմատարրությունը, որը կարելի է արտահայտել «իմանալ, կարողանալ, լինել» կարգախոսով: Այս կարգախոսից բխում է, որ իրավաբանի մասնագիտության համար խիստ անհրաժեշտ են նախ՝ իմացությունը՝ իրավական գիտելիքները, այնուհետև՝ իրավաբանական աշխատանքի գործնական հնտությունները և վերջապես՝ մասնագետի անձնական որակները, բարոյաարժեքային կողմնորոշումները:

Այսպես, փաստաբանը պետք է օժտված լինի քաղաքացիական հասունությամբ, մասնագիտական էքիկայով, իրավական և հոգեբանական մշակույթով, հարգի օրենքը, քաղաքացիների պատիվն ու ար-

Ժանապատվությունը, ունենա բարձր բարոյական գիտակցություն, մարդասիրություն, պարտքի և պատասխանատվության զգացում մարդկանց ճակատագրերի և հանձնարարված գործի համար, սկզբունքայնություն և անկախություն անհատի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության գործում, կամք և համառություն, հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակությունը:

Հասարակությունը պահանջում է, որ իր գործունեության մեջ փաստաբանությունը բարձրանա որակապես նոր, ավելի բարձր աստիճանի, ապահովեն հարձակողական, անզիջում պայքար օրինականության և իրավակարգի խախտումների դեմ:

Փաստաբանական գործնեությունը պահանջում է ճշտական տեսական ապահովում, նրանում զիտուրյան ժամանակակից դրույթների ու եզրակացությունների ներդրում:

Ավարտելով այն թերությունների և բացթողումների նկարագրությունը, որոնք նկատվել են մեր կողմից փաստաբանական գործունեության ոլորտում՝ այն եզրափակենք Գագիկ Հարությունյանի հետևյալ ափորիզմով. «Ե՞րբ են մարդիկ լավ ապրում, երբ ստեղծում են լավ օրենքներ և պահպանում դրանք», իսկ դրանց պահպանման և պաշտպանության համար առանցքային դեր կարող է ունենալ հենց փաստաբանությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով)
- ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրը, ընդունված 01.07.1998թ.

Մասնագիտական գրքեր

- Փաստաբանության իմունքները, Ե.Ռ.Ազարյան, Երևան, 2006թ.
- Իրավաբանի մասնագիտական հմտությունների դասավանդման հիմնահարցեր, Երևան, 2003թ.

3. Մարդու իրավունքները. հարցեր և պատասխաներ, Լիա Լեվին, Երևան, 2003թ.
4. «Օրենք և իրականություն» ամսագիր, 2 (136) փետրվար, Երևան, 2007թ.
5. Адвокат в Европейском суде по правам человека, Н.Б. Сонькин, М., 2004г.

ՄԱՐԻԱՄ ՕՄԻՊՅԱՆ

Ներածություն

Փաստաբանական գործունեությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում համեմատաբար նոր ինստիտուտ է: Դա մասնավորապես վերաբերում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերին¹: Սինչև ՀՀ սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրությունը իրավունք չեն վերապահում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմել Սահմանադրական դատարան:

Հարկ է փաստել նաև այն, որ եթե եվրոպական շատ առաջատար երկրներում սահմանադրական դատարան ֆիզիկական և իրավաբանական անձինք դիմում են իրենց հիմնական իրավունքների և ազատությունների խախտման դեպքում և դրանց պաշտպանության նպատակով, ապա ՀՀ Սահմանադրությամբ վերջիններս կարող են դիմել միայն կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, եթե սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: Այդ դիմունով նրանք վիճարկում են դատարանի վերջնական ակտով իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ այսօր նշված դրույթի վերապահելու հրավունքներից օգտվող ոչ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումներն են վերջնական լուծում ստացել, ինչը մեծամասամբ արդյունք է դիմումներ ներկայացնելու պահանջներին ոչ լիարժեք տեղեկացված լինելու հետ: Դիմումների մեծ մասն էլ վերջնական լուծում չեն ստանում այն պարզ պատճառով, որ դրանք ՀՀ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա չեն: Ցավով պետք է փաստել, որ սահմանադրական բողոքում սխալների առկայության դեպքեր են գրանցվում ոչ միայն իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից դիմումներ ներկայացնելու պարագայում, այլև արդյունք են որոշ փաստաբանների մասնագիտական սխալի:

¹ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը» կարող է դիմել ՀՀ ՍԴ: Բնականաբար, «յուրաքանչյուր ոք» արտահայտության տակ հասկացվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Ինչպես պարզ է դատնում վերոշարադրյալից, սահմանադրական բողոքի բավարարնան նախապայման է հանդիսանում բողոքի ներկայացման ճիշտ ձևը և բովանդակությունը: Իսկ դա էլ իր հերթին, ապահովում է իրավունքներին քաջատեղյակ, բանմաց ու փորձառու փաստարանների կողմից: Ուստի կարևոր է նախևառաջ ճիշտ փաստարանի ընտրությունը:

Սահմանադրական դատարանում փաստարանների՝ որպես ներկայացուցիչ հանդես գալը, ինչպես նշվեց, համեմատարար նոր ինստիտուտ է, սակայն դա ամեննին էլ չի արդարացնում որոշ փաստարանների բանիմացության ցածր մակարդակը: Այս տեսանկյունից կցանկանայի անդրադառնալ Սահմանադրական դատարանում փաստարանական գործունեության մի շարք հիմնախնդիրների՝ փորձելով բացահայտել փաստարանական գործունեության խնդրահարույց ասպեկտները: Կարենորելով խնդրի արդիականությունը հայ իրականության մեջ՝ կանդրադառնանք նաև Սահմանադրական դատարանում գործի քննության ընթացակարգին և փաստարանի գործունեության առանձնահատկություններին սահմանադրական դատարանում:

Նկարագրական մաս

ՀՀ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին է, որն ապահովում է պետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս այն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական արդարադատության ոլորտը ՀՀ-ում կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգով: Դրանցից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը լուրջ հիմքեր է ստեղծում սահմանադրական արդարադատության ոլորտի Էլ ավելի զարգացման ու կատարելազգործման համար: Սահմանադրական դատարանում փաստարանական գործունեությունն ուսումնասիրելու համար նախևառաջ պարզենք, թե ի՞նչ է առհասարակ փաստարանական գործունեությունը:

Փաստարանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստա-

ցողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով¹:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերը Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձանք և (կամ) ներկայացուցիչների միջոցով։ Կողմի ի պաշտոնի ներկայացուցիչ կարող է հանդես գալ Սահմանադրական դատարան դիմում ներկայացրած մարմնի դեկավարը, վիճարկող ակտն ընդունած մարմնի դեկավարը, պատգամավորների առնվազն 1/5-ը ներկայացնող որևէ պատգամավոր՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով։ Սահմանադրական դատարանում որպես կողմի ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորած անձինք՝ պաշտոնատար անձը կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունեցող անձը, որի լիազորությունները հավաստված են օրենքով սահմանված կարգով։ Յուրաքանչյուր կողմ Սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ։ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, վճռաբեկ դատարանի, մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչները, որոնք ցանկանում են մասնակցել Սահմանադրական դատարանի նիստին, կարող են դիմել Սահմանադրական դատարան և նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը, իսկ դատաքննության ընթացքում կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբնումներ տալ Սահմանադրական դատարանի հարցերին։ Հարկ է նշել, որ վերջին տարիներին «կողմի ներկայացուցիչ» արտահայտությունը ոչ միշտ էր ենթադրում փաստաբանների մասնակցությունը դատավարությանը, քանի որ Սահմանադրական դատարանում գործերի քննությունը շատ սահմանափակ էր և բույլատրված էր միայն Հանրապետության Նախագահին, կառավարությանը՝ Նախագահի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում, պատգամավորների առնվազն 1/3-ին, Ազգային ժողովին՝ ազգային դավաճանության կամ այլ ծանր հանցագործության մեջ մեղադրվող Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու համար, Հանրապետության Նախագահին և պատգամավորության թեկնածուներին՝ ընտրությունների հետ կապված վեճերով։ Սակայն, ինչպես հայտնի է, սահմանադրական փոփոխություննե-

¹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, ընդունված՝ 14.12.2004թ.:

բով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը զգալիորեն ընդլայնվել է: Սա, թերևս, պայմանավորված է առկա հասարակական պահանջով և Սահմանադրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: 2005թ. սահմանադրական փոփոխություններով սահմանվում է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, Ազգային Ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, պատգամավորների առնվազն 1/5-րդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում, կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցերով, յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-ին և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Այս առումով փաստաբանների դերը Սահմանադրական դատարանի կողմից քննվող վեճերում, հատկապես անհատական բողոքների մասով, էականորեն մեծանում է¹: Հաշվի առնելով դատական բարեփոխումները, ինչպես նաև սահմանադրական դատարանում գործերի քննության փաստաբանների մասնակցության հազ-

¹ Ե.Ռ.Ազարյանը նշված խնդրին անդրադառնայով, կիրառում է «քաղաքացիներ» արտահայտությունը: Կարծում ենք ավելի ճիշտ է օգտագործել «յուրաքանչյուր ոք» արտահայտությունը, քանի որ «քաղաքացիներ» արտահայտության հասկացությունից դուրս են մնամ ապարադարացիներն ու օտարերկրացիները:

վագյուտ լինելու հանգամանքը՝ կարելի է միանշանակ փաստել, որ սահմանադրական դատավարության ոլորտում փաստաբանական գործունեության տեսությունը ներկայումս գտնվում է իր ձևավորման արշալույսին:

Սահմանադրական դատավարությունն ունի էական առանձնահատկություններ, որոնք ել զգալիորեն բնորոշում են սահմանադրական գործերով մասնակցող փաստաբանի գործունեության առանձնահատկությունները: Հայտնի է, որ սահմանադրական արդարադատության եռյունն իրավական նորմերի հետազոտման և մեկնաբանման միջոցով ՀՀ Սահմանադրության գերակայության և ուղղակի ազդեցության, իշխանության սահմանափակման, անձի իրավունքների և ազտությունների պաշտպանությանն ուղղված գործունեություն է՝ երկրի իշխանական օրենքի դրույթներին այդ նորմերի համապատասխանեցման տեսանկյունից: Փաստացի հանգամանքներն այդ դատարանի կողմից հաստատվում են այնքանով, որքանով դրանք կարող են ազդել վիճարկվող օրենքի կամ նրա առանձին դրույթների սահմանադրականության գնահատման վրա: Ուստի, պարզ է դառնում, որ փաստարանի զիսավոր խնդիրն է դառնում օգնել ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներին պարզել խնդրի ողջ խորությունը, դիտարկվող ակտի կամ իրավական դրույթի բովանդակությունը, իր վստահորդի դիրքի հավատման օգտին բերել համոզի իրավական և գիտական փաստարկություն, ինչպես նաև նպաստել ճիշտ և օրինական որոշման ընդունմանը:

Ենթելով սահմանադրական արդարադատության առանձնահատկություններից՝ անհրաժեշտ է նշել, որ փաստաբանի դերը սահմանադրական գործում իշխանականում Վստահորդին իրական հարցերով խորհրդատվություն մատուցելու, վիտահետազոտական աշխատանք կատարելու մեջ է: Փաստաբանի դատավարական, վարքային և հոեւտորական հնարքները, անկանությունը և անկանությունը չեն բողնի հմուտ դատավորների վրա, այլ կնպաստեն միայն հանրության և վստահորդի վրա լավ տպավորություն գործելու և, ինչու չէ, այդպիսով նաև սեփական փաստաբանական կարողությունները ցուցադրելու լավ առիթ են: Վստահորդի իրավունքների և շահերի իրական պաշտպանության համար ավելի առաջնային է, թե որքան լիորն է փաստաբանն ուսումնասիրել խնդրի էությունը, որքանով է նա պատրաստ խորհել իրավունքի կիրառական կատեգորիաներին, սահմանադրության տառին և ոգուն համապատասխան: Ուստի, անհրաժեշտ է ոչ միայն զուտ իրավունքի որևէ ճյուղի մասնագիտացում, այլև իշխանական օրենքի, դիտարկվող խնդրին առնչվող ուսմունքների, իրավունքի զարգացման համաշխարհային միտումների խորը իմացություն: Այս իմաստով պա-

տահական չէ, որ որոշ հեղինակներ Սահմանադրական դատական վիճաբանությունը սահմանել են որպես իմացության գործոնքաց¹:

Ի տարբերություն այլ դատավարությունների՝ սահմանադրական դատավարությունն աչքի է ընկնում իր արագընթացությամբ: Այստեղ ընդամենը մեկ աւայան է, որի ընդունած որոշումները վերջնական են և վերանայման ենթակա չեն: Այս հանգամանքը քաջ գիտակցելով՝ սահմանադրական դատավարությանը մասնակից փաստաբանը պարտավոր է իր մոտ եղած փաստարկները քերել միանգամից, այլապես հետազոյն նման հնարավորություն նրան չի ընձեռվի:

Սահմանադրական արդարադատության երրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրականացնելիս մշտապես պաշտպանվում են հանրային, այլ ոչ թե մասնավոր շահերը:

Փաստաբանի՝ որպես ներկայացուցչի իրավունքները սահմանափակված են գործով կողմից իրավունքների ամբողջությամբ: Կողմերը և նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստարդեր, գործի առնչությամբ ներկայացնել իրենց դիրքորոշումը, հարցեր տալ մյուս կողմին, նրա ներկայացուցչին, մասնագետին, վկային, միջնորդությունները հարուցել, առաջարկություններ անել: Տեսականորեն փաստաբանները կարող են կողմից ներկայացուցիչ լինել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից դիտարկվող ցանկացած գործով:

Այստեղ հարկ է հիշել, որ ՀՀ Սահմանադրությունն (հոդված 100) առանձնացնում է սահմանադրական դատավարության հետևյալ տեսակները՝ 1) օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, Վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականությունը, 2) միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մինչև դրանց վավերացումը, 3) հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճների լուծումը, 4) Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճների լուծումը, 5) Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտների անհաղթահարելի կամ վերացած ճանաչումը, 6) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքների առկայության մասին եզրակացության արամադրումը, 7) Հանրապետության Նախագահի՝ իր

¹ Տես Էօթ-է՛ Ա. Ի., ԱՇԾԻՇԵԱ Ի. Ի. «Քաջանակ ածառաջան ա ԷՇԻ նօթօնօթէ ի նօա», ԹՕ. Ի. : Բ Ի ԷՕԵ, 1998, թ. 99-104

լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացության տրամադրումը, 8) սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ եզրակացության տրամադրումը, 9) համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացության տրամադրումը, 10) օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ ազդելու մասին որոշման կայացումը:

Չնայած, որ գործերի վերոշարադրյալ բոլոր տեսակները դիտարկվում են սահմանադրական դատավարության ընդհանուր կանոնների համաձայն, այնուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրն ունի իր նրբությունները: Հենց դա է թերևս պատճառը, որ փաստաբանները սահմանադրական դատավարությանը հիմնականում մասնակցում են մարդու և քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության գործերով: Հաշվի առնելով մեր հանրապետության համար այդ պրակտիկայի նորույթը՝ անհատական դիմում-քողոքների ներկայացման վերաբերյալ, ներկայացնենք այլ երկրների փորձն այդ գործներացից: Այսպես, օրինակ, Ալբրեժանի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում դատախազի կամ փաստաբանի մասնակցությունը սահմանադրական դատավարությանը: Նմանատիպ կարգ է ընդունված նաև Թուրքիայում: Այստեղ ևս պաշտպանը մասնակցություն չի ունենում սահմանադրական դատավարությանը: Իսկ ահա Վրաստանում՝ գործի քննության ցանկացած փուլում, 2 կողմերն էլ իրավունք ունեն դիմելու իրավաբանի օգնությանը, որը դատարանի նիստին մասնակցում է կողմի կամ նրա ներկայացուցչի հետ միասին:

Փորձենք պարզել, թե ի՞նչ կարգ է ընդունված մի շարք արտասահմանյան երկրներում: Այսպես, Բուտախայի օրենսդրությունը նախատեսում է, որ հիմնական դատավարության կողմերը պետք է մասնակցեն դատապաշտպանով:

Իսպանիայում սահմանադրական պաշտպանության պահանջ ներկայացնելու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք պետք է ներկայացված լինեն Մադրիդի դատարաններում ճանաչված փաստաբանների կողմից:

Ավստրիան աշխարհի առաջին պետությունն էր, որ 1920թ. հիմնեց սահմանադրական դատարան և արմատավորեց սահմանադրական արդարադատության մասնագիտացված համակարգ: Սահմանադրական դատարանում հանդես եկող անհատներն իրենց գրավոր դիմում-

ները պարտավիր էին ներկայացնել լիազորված փաստաբանի միջոցով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պաշտպանի մասնակցությունը Դաշնային սահմանադրական դատարանում չի նախատեսվում: Պորտուգալիայում, որպես կանոն, փաստաբանի մասնակցությունը նիստին պարտադիր է, սակայն դա կարող են անել միայն Պորտուգալիայի գերագույն դատարանում հանդես եկող փաստաբանները:

Լիխտենշտեյնում անհատական սահմանադրական բողոքներով բարձր պետական տրիբունալում որպես կողմ հանդես են գալիս բողոք բերած անձինք, նրանց ներկայացնող իրավաբանը (ոչ պարտադիր) և պետական մարմինները:

Լատվիայում դատավարության կողմերը կարող են սահմանադրական դատավարությանը մասնակցել անձամբ կամ ներկայացուցչի միջոցով:

Կապրուս Գերագույն դատարանի դատավարությանը մասնակցում են կողմերի պաշտպանները:

Հոնգարիայում սահմանադրական դատավարությանն իրավական ներկայացուցչի մասնակցությունը բույլատրելի է, բայց պարտադիր չէ:

Ումբինիայում կողմերը կարող են ներկայացվել արդարադատության գերագույն դատարան բողոք բերելու իրավունք ունեցող փաստաբանների միջոցով:

Սլավոնական երկրներից, մասնավորապես Չեխիայում ֆիզիկական և իրավաբանական անձինք սահմանադրական դատարանում պետք է ներկայացվեն պաշտպանի կողմից: Սահմանադրական դատարանը կողմերին պաշտպաններ չի տրամադրում, սակայն անհատները կարող են դիմել Չեխիայի փաստաբանների միություն՝ իրենց պաշտպան տրամադրելու համար:

Բուլղարիայում դատարանում ներկայացուցչությունը կարգավորված չէ որևէ նորմով: Դիմումները պետք է ներկայացվեն հենց դիմումատունների կողմից: Անթույլատրելի է, որ դրանք ներկայացվեն ներկայացուցչի միջոցով:

Լեհաստանում սահմանադրական բողոք կարող է բերել միայն պաշտպանը կամ իրավախորհրդատուն:

Ուկրաինայում քաղաքացիները և իրավաբանական անձինք առհասարակ սահմանադրական դատարան դիմելու իրավունք չունեն:

Բելոռուսի գործող օրենսդրությամբ սահմանադրական դատարանում գործերի քննությանը փաստաբանների մասնակցությունն ուղղակիորեն չի նախատեսվում: Սակայն, որպես կողմի ներկայացուցիչ՝ կա-

բող են հանդես գալ սահմանված կարգով փաստաբաններ և այլ անձինք:

Ուստատանում, որպես դիմումատուի ներկայացուցիչ՝ սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ փաստաբանը կամ իրավաբանի գիտական աստիճան ունեցող անձինք, որոնց իրավասությունները հավաստվում են համապատասխան փաստաբորբերով:

Այսպիսով, ինչպես նկատում ենք վերը հիշատակված պետությունների բացարձակ մեծամասնությունում ընդունված հայեցակարգ է սահմանադրական դատարան ներկայանալ փաստաբանի ներկայացուցությամբ: Սակայն ինչպես նկատեցինք, օրինակ, Հսպանիայում և Պորտուգալիայում անհատական դիմում-բողոքները ներկայացվում են համապատասխանաբար Մարդիի և Պորտուգալիայի դատարաններում ճանաչված փաստաբանների միջոցով: Եթե փորձենք այս նախադեպը կիրառել նաև Հայաստանում, ապա դրանից մի փոքր կտուժի սոցիալապես անապահով խավը:

ՀՀ սահմանադրական դատավարությունը կազմված է մի քանի փոխկապակցված փուլերից՝¹⁾ 1) սահմանադրական դատարան դիմելը, 2) դիմումի նախնական քննարկումը, 3) նիստի հրավիրումը և գործը քննության նախապատրաստելը, 4) գործի քննությունը դատական նիստում, ներառյալ վերջնական որոշման կամ եզրակացության տրամադրումը, 5) ՀՀ սահմանադրական դատարանի ակտի կատարումը: Փաստաբանը, որպես կողմի ներկայացուցիչ կարող է այս կամ այն շափով մասնակցել բոլոր փուլերում, բացառությամբ դիմումի նախնական քննարկման, նիստի հրավիրման, գործը քննության նախապատրաստման և վերջնական որոշման ընդունման փուլերի: Այդ բոլոր գործընթացներն ընթանում են դատարանի ներսում, առանց դատավարության այլ մասնակցների անմիջական մասնակցության: Դատավարության յուրաքանչյուր փուլում փաստաբանի գործունեությունն ունի իր առանձնահատկությունները: Գործի քննության ներկայացնելու փուլը փաստաբանի համար սահմանադրական գործով նրա աշխատանքի կարևորագույն փուլն է: Դա կապված է այն հանգանանքի հետ, որ հենց գործի սկզբնական նախապատրաստման ժամանակ է որոշվում սահմանադրական դատարան դիմելու հիմքերի առկայության մասին հարցը, իսկ եթե գոյություն ունեն մի քանի տարրերակներ, դրվում է հիմնականը, մշակվում է համապատասխան կողմի դիրքորոշումը, որոշվում են դրա հիմնավորման փաստարկները, սահմանվում է դատարան հրավիրման ենթակա հնարավոր վկաների, փորձագետների, մասնագետների շրջանակը, դիմումին կցվող կամ դատարանի կողմից հավանաբար պահանջվող անհրաժեշտ փաստաբորբերի և այլ նյութերի ցուցակը:

ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում ամրագրված է. «Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք, ընդ որում Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան»: Իսկ վերոնշյալ՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածում ասվում է. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Փաստաբանը պարտավոր է կատարելավիս տիրապետել այս խնդիրներին, հակառակ դեպքում անհստափելի են սխալները, որոնք լավագույն դեպքում կծգծեն խախտված սահմանադրական իրավունքների ու ազատությունների վերականգնման գործընթացը, իսկ վատագույն դեպքում կզրկեն նրա վստահորդին իր շահերը պաշտպանելու հնարավորությունից:

Անդրադառնալով հայաստանյան պրակտիկային և վերոշարադրյալի կապակցությամբ՝ տեղին է մեջբերել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի, իրավագիտության դոկտոր Գագիկ Հարությունյանի հետևյալ խոսքերը. «Եթե նոյնիսկ դիմումների տեքստերը դուք նայեք, նոյնիսկ փաստաբանների կողմից կազմված, հաճախ գրվում է. «Ի՞ն պաշտպանյալի նկատմամբ կիրառված բոլոր օրենքները համարել հակասահմանադրական»: Այս պարագայում պարզ է, որ անհնարին է նման իրավագիտակցությամբ արդյունավետ իրավունք պաշտպանել»¹: Միանգամայն իրավացիորեն Գ. Հարությունյանը նկատում է, որ մեր օրերում նոյնիսկ իրավաբանների մեծ մասի իրավագիտակցության մակարդակն է ցածր: Դա է վկայում շատ փաստաբանների կողմից դիմումի վերոնշյալ ձևակերպումը: Սա մտորելու տեղիք է տալիս: Հարց է առաջանում. ինչպես խոսափել վերը նշված իրավիճակներից: Հարցը բնականաբար լուծում է պահանջում: Այս առումով ցանկալի կիներ փոփոխություններ կատարել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում:

¹Տե՛ս Գ.Գ.Հարությունյան, «Այսօրվա բազմաթիվ մարտահրավերներից մեկն էլ իրավական համակարգի կայունացումն ե», «Իրավաբանական լրատու» պարբերական, 2006թ. նոյեմբեր, թիվ 6, էջ 5, www.ayla.am

ՀՀ Սահմանադրական դատարանում գործի քննությանը խոչնդուսող հանգամանքների առկայության սոուզումը

Մինչ Սահմանադրական դատարան դիմելու համար նյութերի նախապատրաստումը՝ փաստաբանը պետք է հանովի, որ գործի՝ սահմանադրական արդարադատության շրջանակներում քննարկմանը խոչնդուսող հանգամանքները բացակայում են: Նշված դրույթները սահմանվում են օրենքի 29-րդ և 32-րդ հոդվածներում:

Առաջինն անհրաժեշտ է պարզել, թե տվյալ դիմումն ընդդատյա է Սահմանադրական դատարանի քննմանը, թե՝ ոչ: Դիմումի մեջ բարձրացված հարցը Սահմանադրական դատարանին ակնհայտորեն ընդդատյա չի ներկայացված կամ օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածներում սահմանված դիմումի ձևի պահանջներին չհամապատասխանելու կամ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք չունեցող մարմնի, անձի կողմից այն ներկայացվելու դեպքում դիմուրը առավելագույնը 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է օրենքի պահանջներին իր դիմումի անհամապատասխանության մասին:

Միևնույն ժամանակ փաստաբանը պետք է հաշվի առնի, որ Սահմանադրական դատարանին ոչ ընդդատյա դիմումները կարող են այնուհետև ուղղվել ընդդատյա ատյանին, իսկ նման բողոքները, որպես կանոն, շատ ավելի արագ ու պատշաճ կարգով են դիտարկվում համապատասխան մարմինների կողմից, քան սովորական ճանապարհով ստացված գրությունները:

Փաստաբանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, որ դիմումների առաջնորդության պայմաններում դատարանի քարտուղարությունը կփորձի գտնել ամենաշնչին առիթը, որով կարելի է դիմումը ետ ուղարկել: Այս դեպքում փաստաբանը պետք է դրսորի փաստաբանին բնորոշ համառություն, ինչպես նաև նոր դիմում ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է, որ նա քերի հենց սահմանադրական դատավարությունում այն քննարկելու անհրաժեշտության մասին առավել համոզիչ փաստեր:

Այն գործերը, որոնք Սահմանադրական դատարանի քարտուղարությունը ետ չի վերադարձնում, ներկայացվում են ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահին, որը հանձնարարում է Սահմանադրական դատարանի մեկ կամ մի քանի անդամների գրադիւն գործի նախնական ուսումնասիրմանը: ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 10-րդ հոդվածի համաձայն՝ դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացնում է (են) Սահմանադրական դատարանի անդամներից որևէ մեկը (մեկից մեկից ավելի անդամներ)՝ Սահմանադրական դատարանի նախագահի հանձնարարությամբ:

Դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ ուշ, քանի դիմումի գրանցումից հետո՝ հետևյալ ժամկետներում.

(ա) Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարցերով (բացառությամբ Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելով վերաբերյալ հարցերի) ներկայացված դիմումներին՝ 30-օրյա ժամկետում, (բ) Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետում նշված հարցերով ներկայացված դիմումներին՝ 15-օրյա ժամկետում, (զ) Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5 և 9-րդ կետերում նշված հարցերով ներկայացված դիմումներին՝ 15-օրյա ժամկետում, (դ) Սահմանադրության 100-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում նշված հարցերով ներկայացված դիմումներին՝ 10-օրյա ժամկետում:

Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1 (բացառությամբ մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ հարցերի), 4-րդ և 6-րդ կետերում նշված հարցերով ներկայացված դիմումների նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ քանի դիմումի գրանցումից 24 ժամ հետո:

Սույն մասի «ա» և «բ» կետերում նշված ժամկետը Սահմանադրական դատարանի կողմից կարող է երկարաձգվել մինչև 10 օրով, «գ» կետում նշված ժամկետը՝ մինչև 5 օրով, իսկ «դ» կետում նշված ժամկետը՝ մինչև 3 օրով:

Կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելով վերաբերյալ հարցերով Հանրապետության Նախագահի դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ ուշ, քանի դիմումի գրանցումից 8 օր հետո:

Մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ հարցերով ներկայացված դիմումների նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ ուշ, քանի դիմումի գրանցումից 8 օր հետո: Նշված ժամկետը Սահմանադրական դատարանի կողմից կարող է երկարաձգվել մինչև 3 օրով:

Սահմանադրական դատարանի՝ դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացնող անդամը (անդամները) դիմումի նախնական ուսումնասիրման արդյունքներով կազմում է (կազմում են) գեկուցագիր (գեկուցագիր):

Զեկուցագիրը և Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավամուրայատվական ծառայության եզրակացությունը պետք է պարունակեն հիմնավորումներ ներկայացված դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը ներժելու՝ «Սահմանադրական

դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված հիմքերի վերաբերյալ:

Վերջին սահմանադրական փոփոխությունների արդյունքում բավականին աճել է ՍԴ ներկայացվող դիմումների քանակը՝ կապված ՍԴ դիմելու իրավունքը ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման հետ։ Սահմանադրական ներկայացման վերջին տարիների դրությամբ վիճակագրության ընդհանուր պատկերը։

2006 թվականին Սահմանադրական դատարանում մուտքագրվել են Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 287 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող անձանց 381 դիմում։ Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից փաստացի դիմումների պատկերն այսպիսին է։ ՀՀ Նախագահ-47 դիմում, ՀՀ Ազգային ժողով-0 դիմում, պատգամավորների առնվազն 1/5-րդ-2 դիմում, կառավարություն-0 դիմում, տեղական ինքնակառավարման մարմիններ-0 դիմում, ֆիզիկական անձինք-221 դիմում, իրավաբանական անձինք-13 դիմում, դատարաններ-1 դիմում, գլխավոր դատախազ-1 դիմում, մարդու իրավունքների պաշտպան-2 դիմում, Հանրապետության Նախագահի թեկնածուներ-0 դիմում¹։

Եթե ուսումնասիրենք ՀՀ Սահմանադրական դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումները, ապա կնկատենք, որ բավականին հազվադեպ են օրենքի և այլ իրավական ակտերի դրույթները ճանաչվում հակասահմանադրական։ Ուստի նման պայմաններում հարկ է պարզել փաստաբանի սխալի հետևանքով առաջացող այն պատճառները, որոնց հիմնան վրա դիմումների առատության պայմաններում շատ հաճախ դիմումը հետ է վերաբարձվում Սահմանադրական դատարանի քարտուղարության կողմից։ Հաճախ Սահմանադրական դատարան դիմում նախապատրաստող փաստաբանները կոնկրետ քաղաքացիական կամ քրեական գործերի հետ կապված թույլ են տալիս հետևյալ սխալը։ Դիմումում վերլուծվում են իրավունքի համապատասխան ճյուղի նորմերը, գործի փաստացի հանգամանքները, սակայն բաց է բողնովում հիմնականը՝ վիճարկվող ակտով խախտված սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, այսինքն՝ ձևական հղում է կատարվում ՀՀ Սահմանադրության նորմի վրա, սակայն չի մեկնաբանվում, թե ինչո՞ւ՝ դիմողի կարծիքով հենց այդ նորմը խախտվել։ Դիմումների հետ վերաբարձման առավել տարածված պատճառներից մեկն է, թերևս այն է, որ վիճարկվում է ոչ թե կոնկրետ նորմի

¹Տե՛ս www.concourt.am

կամ ակտի սահմանադրականությունը, այլ տվյալ նորմի կիրառման դատական փաստացի նախադեպը: Սա իսկապես վիճելի խնդիր է: Ուստի, այս հանգամանքից օգտվում են Սահմանադրական դատարանի քննադատները, նշելով, որ դատական նախադեպի քննությունը Սահմանադրական դատարանի խնդիրը չէ, սակայն օրենքի կիրարկումն է առաջացնում միայն նրա բովանդակության մեկնաբանման անհրաժեշտություն: Փաստարանի առաջնակարգ խնդիրն է նաև ստուգել, թե Սահմանադրական դատարանում չի՝ եղել արդյոք նման հարցի քննարկում: Եթե նոյն հարցի վերաբերյալ կայացվել է վերջնական որոշում, ապա դատարանը կմերժի բողոքի ընթացումը: Սահմանադրական դատարանի որոշմամբ կարող են միավորվել և դատարանի նոյն նիստում քննվել միայն նոյն հարցին վերաբերող գործերը: Այս ամենը քաջ գիտակցելով՝ հմուտ փաստարանը պետք է վստահորդին բացատրի այդ բոլոր տարրերակները, որպեսզի վերջինս գիտակցի գործի քննության հեռանկարները: Եթենքն իմաստ ունի խորհուրդ տալ վստահորդին դիմել Սահմանադրական դատարան, եթե նոյնիսկ նոյն հարցով կայացվել է որոշում: Խնդիրն այս է, որ նման դեպքում Սահմանադրական դատարանը տալիս է սահմանում, որում նշվում է, որ Սահմանադրական դատարանը նոյն խնդիրին վերաբերող համանման գործ արդեն քննել է, և որ այդ գործով կայացված որոշումը տարածվում է նաև նոր գործի վրա:

ՀՀ Սահմանադրական դատարանում գործի քննության հիմքերը և բույլատրելիությունը

Գործի քննության հիմքերը և բույլատրելիությունը կարևորագույն գործունետը են, որոնց քաջատեղյակ պետք է լինի փաստարանը՝ նախարան գործը ստանձնելը: Հիմնականներից կարելի է նշել սահմանադրական գործի քննության հետևյալ հիմքը՝ ի հայտ եկած անորոշությունն այն հարցում, թե արդյո՞ք օրենքը, այլ նորմատիվ ակտը կամ միջազգային պայմանագիրը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Փաստարանները շատ հաճախ մատնանշում են հենց այս հիմքը, սակայն անհրաժեշտ է նկատել, որ այս հիմքը ավելի շատ վերաբերում է դատարանին, քան դիմողին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ դիմումում նախնառաջ պետք է նշվեն Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու իրավունք է տալիս (4-րդ մաս), Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության հա-

մապատասխան նորմերին հղումներ կատարելով (5-րդ մաս): Այստեղ խոսքը ոչ թե դիմողի կասկածների կամ ենթադրությունների մասին է, այլ վիճարկվող ակտի վերաբերյալ փաստարանի օգնությամբ ձևավորված հստակ դատողության մասին: Ուստի ակնհայտ է, որ «անորոշության» վրա հղումը հեռու է ճիշտ լինելուց: Այս կարծիքին են մի շարք մասնագետներ և սւ¹: Օրենքը պետք է իրավասության վերաբերյալ վեճի լուծման համար որպես միջնորդության բույատրելիության հիմք նախատեսի դիմողի փաստարկներն այն մասին, որ ակտի ընդունումը կամ իրավական բնույթի այլ գործողությունների կատարումը կամ կատարումից խուսափելը խախտում է Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների տարանջատման սկզբունքը (հոդված 5):

Պատասխանող կողմից շահերը պաշտպանող փաստարանը դիմուի կողմից «անորոշության» վրա հղում կատարելու դեպքում իրավունք ունի դիմումի պատասխանում նշել, որ դիմումը կազմված է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ և այդ պատճառով չի կարող դատարանի կողմից քննության ընդունվել: Իսկ եթե այնուամենայնիվ գործն ընդունված է, ապա նպատակահարմար է միջնորդություն ներկայացնել դրա կասեցման մասին կամ ելույթում ուղղակի նշել դիմումի տվյալ թերությունը:

Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի բովանդակությունը

Փաստարանը պարտավոր է պատրաստել դիմումը բարձր մասնագիտական մակարդակով, օրենքի պահանջներին համապատասխան: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում սահմանվում են Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի պահանջները, ըստ որի՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի (անձանց) կողմից ստորագրված: Դիմումում պետք է նշվեն՝ 1) Սահմանադրական դատարանի անվանումը, 2) դիմողի անունը (անվանումը), հասցեն (իրավաբանական հասցեն), 3) դիմողի ներկայացուցչի մասին անհրաժեշտ տվյալներ, եթե կան այդպիսիք, 4) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը է տալիս, 5) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմուի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կա-

¹ Տե՛ս Էջյանն Ա.Ա., Էաշանն Է.Ա. Է՛լոնօօօէն ի այ լինօօօ ա Թ՛ննէնն է Օհանձնությունները. Օհանձնությունները. Երևան, 1998, լ.185

տարված հղումներով, 6) դիմումին կցվող նյութերի ցանկը, եթե կան այդախիք: Սույն օրենքի 69-րդ հոդվածում նշված գործերով, այն է՝ կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա (անհատական դիմումների քննություն), դիմող պարտավոր է Սահմանադրական դատարան ներկայացնել նաև սույն օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդրրագիրը կամ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին: Պետական տուրքը ֆիզիկական անձանց Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանվում է բազային պետական տուրքի 5-ապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց համար՝ 20-ապատիկի չափով: Դիմողի միջնորդության հիման վրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը Սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ինչպես յուրաքանչյուր փաստարուղթ, այնպես էլ սահմանադրական դիմումն ունի ներածական, նկարագրական, փաստարկման, եղանակակից մասեր, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկ: Անդրադարձնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Դիմումի **ներածական մասում** բերվում են ՀՀ Սահմանադրության այն նորմերը, որոնք սահմանադրական դատարան դիմելու իրավունք են տալիս: **Նկարագրական մասում** նշվում են ստուգման ենթակա ակտի ճիշտ և լրիվ անվանումը, համարը, ընդունման և հրապարակման ամսաթիվը, հրապարակման աղբյուրը և այլ տեղեկություններ կամ նեկարանման ենթակա Սահմանադրության հոդվածները: Դիմումի **փաստարկման մասում** շարադրվում է դիմողի դիրքորոշումն իր առաջադրած հարցի առնչությամբ՝ Սահմանադրության համապատասխան նորմերի հղումներով և մանրամասն իրավական հիմնավորմամբ: **Եզրափակիչ մասը** պետք է բովանդակի դիմողի հստակ պահանջը ՀՀ Սահմանադրական դատարանին: Այս մասում ներկայացվում է դիմումի եռությունը: Դիմումն ավարտվում է դրան կցվող **փաստաթղթերի ցանկով**: Այդ ցանկն իր օրենդրական ամրագրումն է ստուգել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում, ըստ որի՝ 1) լիազորագիրը կամ ներկայացնելու լիազորությունները հավաստող այլ փաստաթուղթը, 2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, 3) վիճարկվող ակտի պաշտոնական տեքստը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հարցերով դիմելու դեպ-

քերում, 4) դիմողի հայեցողությամբ՝ այլ նյութեր: Հարկ է նկատի ունենալ, որ դիմումն ընդունվելուց հետո դիմող կողմը նոր նյութեր կարող է ներկայացնել միայն Սահմանադրական դատարանի որոշմամբ: Իսկ դիմումն օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում դիմումը հետ վերադարձնելը բոլորովին էլ գործի քննության մերժում չի նշանակում: Օրենքի պահանջներին դիմումի համապատասխանեցումից հետո դիմողը կրկին Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը ունի: Փաստարանը պարտավոր է վստահորդին բացատրել նաև, որ իրավունք ունի դիմումը հետ վերցնել մինչև գործի քննության սկսվելը:

Եզրափակիչ մաս

Փաստարանի գործունեության հիմնական բովանդակությունը Սահմանադրական դատարանի նիստում պայմանավորված է մրցակցության սկզբունքով ընթացող դատավարությամբ և նպատակառող-ված է դատարանին լրացնելով, առավել արդյունավետ պարզաբանում ներ տալուն՝ վիճարկող ակտի բովանդակությունն ավելի խորը բացահայտելու նկատառումներով: Այն կարծիքն է արտահայտվում, որ սահմանադրական դատավարությունը տարբերվում է դատավարության մյուս տեսակներից նրանով, որ կողմերը կապված են սահմանադրական դրույթները պաշտպանելու ընդհանուր նպատակով, սակայն տարբեր դիրքերից: Այս կարծիքի հետ մի փոքր դժվար է համաձայնվել, քանի որ սահմանադրական դատավարությունը նույնպես շատ լարված ու բանավեճներով հագեցած է ընթանում: Իսկ դա բնականաբար նշանակում է, որ սահմանադրական դատավարությանը փաստարանը պետք է պատրաստվի ավելի մանրամասն, քան սովորական դատավարություններին, քանի որ որոշումը, որ նա ստանում է, տարածվում է ոչ միայն իր վստահորդի, այլև կարող է ազդել մարդկային զանգվածների վրա: Մեր դիտարկումները լիարժեք չեն լինի, եթե մենք չանդրադանքանք ՀՀ ներկայիս օրենսդրությամբ սահմանված սահմանադրական դատավարության ընթացակարգի բացերին: Այն բավականաշափ ճկում չէ և լուրջ լրամշակման կարիք ունի: Այսպես, դրանում նախատեսված չեն որևէ դատավորի բացարկ հայտնելու, դատավարության ընթացքում միջնորդություններ ներկայացնելու և այլ ընթացակարգերը: Ուստի, Սահմանադրական դատարանում փաստարանական գործունեության զարգացման ճանապարհին պետք է հաշվի առնվելն միջազգային պրակտիկայում ընդունված սահմանադրական դատավարության ընթացակարգերին բնորոշ բոլոր անհրաժեշտ և, իհարկե, ՀՀ օ-

թենսդրությանը համապատասխանող դրույթները: Այս առումով տեղին է հիշատակել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր Գ. Հարությունյանի կարծիքը. «Զգուշավոր մոտեցում է դրսևորվել անհատական դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողությամբ մարդու իրավունքների պաշտպանության հարցերին: Գերմանիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների փորձը վկայում է, որ նոր հազարամյակում սահմանադրական արդարադատության համարգային զարգացումներն ընթանալու են հատկապես մարդու սահմանադրական իրավունքների անմիջական պաշտպանության երաշխավորման ուղղությամբ, և այս հարցում հապաղելով կամ ավելորդ զգուշավորություն հանդես բերելը չեն կարող արդարացվել: Անցումային հասարակական համակարգ ունեցող երկրների համար բացառիկ կարևոր է Սահմանադրության վերացական մեկնարանան լիազորությունը»¹: Ինչպես տեսնում ենք, այն լիովին համապատասխանում է ՀՀ ներկայիս իրավական համակարգին, մասնավորապես, սահմանադրական արդարադատության ոլորտում: Այդ համակարգի զարգացման ճանապարհին բավականին լուրջ քայլ կարող է լինել «Փաստարանության մասին» ՀՀ օրենքում որոշ փոփոխություններ մտցնելը: Մասնավորապես, ցանկալի կիյներ օրենքում ավելացնել 31դ հոդվածը, որով կանորագրվեր. «Սահմանադրական արտոնագիրը տրամադրվում է Սահմանադրական դատարանում՝ օրենքով նախատեսված հիմքերով փաստարանական գործունեություն իրականացնելու նպատակով: Սահմանադրական արտոնագիր տրամադրելու համար փաստարանը փաստարանների պալատի նախագահին է ներկայացնում դիմում՝ սահմանադրական արտոնագիր ստանալու խնդրանքով, որին կցովում են որակավորման հանձնաժողովի կողմից տրված համապատասխան վկայագրի պատճենը եւ փաստարանի արտոնագիրը: Սահմանադրական արտոնագիրը տրվում է անժամկետ»: Այսինքն՝ սա մի նոր փաստարանական գործունեության արտոնագիր կիյներ, այն է՝ սահմանադրական արտոնագիր, որը կարող էր ստանալ ցանկացած փաստարան՝ համապատասխան քննություն հանձնելուց հետո: Այս փոփոխությանն էլ համապատասխան պետք է փոփոխություն կատարել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում՝ ավելացնելով այնտեղ 46-րդ հոդվածի 6-րդ կետ՝ «Կողմի ներկայացուցիչ ՀՀ Սահմանադրական դատարանում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքում կարող է լինել օրենքով սահմանված յուրաքանչյուր որ կամ Սահմանադրական

¹Տե՛ս Գ.Գ.Հարությունյան, «Դատական իշխանություն. համակարգային գործակցություն եվրոպական զարգացումների փորձից», Երևան, 2002, էջ 400-401

դատարանում գրանցված և սահմանադրական արտոնագիր ունեցող փաստաբան»: Վերոնշյալ առաջարկները հետապնդում են հետևյալ նպատակները.

- նվազագույնի հասցնել անհիմն և ոչ պատշաճ ձևով ներկայացված անհատական դիմում-բողոքների քանակը,
- սահմանադրական արդարադատությանը մասնակցող փաստաբանների մեջ բարձրացնել սահմանադրական արդարադատության նկատմամբ պատասխանատվությունը և առողջ մրցակցություն ստեղծել փաստաբանների միջև,
- օգնել իրավաբանական և ֆիզիկական անձանց խուսափել «ոչ պատշաճ» փաստաբանի ընտրությունից,
- բարձրացնել փաստաբանների իրավագիտակցության մակարդակն այս ոլորտում,
- սահմանադրական արդարադատության իրականացման գործընթացը դարձնել հնարավորինս արագ և որակյալ:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ-իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով)
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, ընդունված 01.06.2006թ.
3. Սահմանադրական դատարանի կանոնակարգ, ընդունված 07.07.2006թ.
4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12.2004թ.

Մասնագիտական գործեր

1. Փաստաբանության հիմունքներ, Ե.Ռ.Ազարյան, Երևան, 2006թ.
2. «Դատական իշխանություն. համակարգային գործակցություն եվրոպական զարգացումների փորձից», Գ.Գ.Հարությունյան, Երևան, 2002թ.

3. Лучин В.О., Доронина О.Н. “Жалобы граждан в Конституционный суд”, РФ, Москва, ЮНИТИ, 1998г.
4. Кряжков В.А., Лазарев Л.В. “Конституционная юстиция в Российской Федерации”, Учебник пособие, Москва, БЕК, 1998г.

Իմաստերմետային կայքեր

1. www.ayla.am - «Այսօրվա բազմաթիվ մարտահրավերներից մեկն էլ իրավական համակարգի կայունացումն է» , Գ.Գ.-Հարությունյան:
2. www.concourt.am - ՍԴ-որոշումներ:

ՆԱԽՐԱ ԴԻԼԱՆՅԱՆ

Ներածություն

Յուրաքանչյուր քաղաքացի, եկեղեց իր իրավագիտակցությունից, կուլտուրայից, կրթությունից, դաստիարակությունից, բնավորության գծերից, հանգամանքներից, ապրում և զործում է հասարակությունում՝ մնալով օրենքի շրջանակներում։ Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ պետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, նրա իրավունքների սահմանափակման կամ խախտման դեպքում՝ դատական ատյաններ դիմելու հնարավորությունը։ Իրավական խնդիրների օրինական, արդարացի լուծման ճանապարհը գտնելու զործում, այս կամ այն իրավիճակում կողմնորոշվելու, իրավունքի գործող նորմերի հիման վրա որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով էլ կյանքի է կոչվել փաստաբանությունը։

Չնայած փաստաբանությունը Հայաստանում նոր ինստիտուտ չէ՝ պետք է նշել, որ էթիկայի տեսանկյունից մեր փաստաբանները շատ անելիքներ ունեն։

Որակյալ իրավաբանական օգնությունը ենթադրում է նաև այդպիսի օգնության տրամադրում՝ պահպանելով իրավաբանական էթիկայի կանոնները։

Հարց է առաջանում. իսկ ի՞նչ է իրավաբանական էթիկան, մասնավորապես, փաստաբանական էթիկան, և արդյո՞ք գոյություն ունեն այնպիսի նորմատիվ-իրավական ակտեր, որոնցով կարգավորվում է փաստաբանական գործունեությունը էթիկայի տեսանկյունից։ Ինչ խնդրահարույց ասպեկտներ գոյություն ունեն այս ոլորտում։

Սուրբ Անրիկայց պատուի աշխատանքում կփորձենք պատասխանել առաջադրված հարցերին, ինչպես նաև բացահայտել փաստաբանական էթիկայի բացերը։

Նկարագրական նաև

Մինչ բուն թեմային անցնելը՝ փորձենք հակիրճ անդրադառնալ փաստաբանական գործունեությանն ընդհանրապես։

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված է, որ «**Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն**

ստանալու իրավունք: *Օրենքով ճախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճարք:*

Պետությունն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովում է ոչ միայն իրավապահպան գործունեություն իրականացնող պետական մարմինների, այլև այնպիսի հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց անմիջական խնդիրն անձին իրավաբանական օգնություն ցույց տալն է:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանադրական այս դրույթի իրականացումը կարող է ապահովել փաստաբանների պալատի կողմից, քանի որ փաստաբանները՝ որպես իրավաբաններ, կարող են ցույց տալ որակյալ իրավաբանական օգնություն:

Սահմանադրական նորմում ամրագրում ստացած նշված դրույթը ձևական բնույթ չի կրում, այլ պայմանավորված է օրենքների բազմաքանակությամբ և բարդությամբ: Հասարակության անդամների ճնշող մեծամասնությունը չունի բավարար գիտելիքներ իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև օրենքների կիրառման կարգի մասին:

Հատկապես մեծ է իրավաբանական օգնության ցուցաբերման նշանակությունն անձի ծերբակալման կամ կալանավորման դեպքում: Դատավարական այդպիսի խափանման միջոցների կիրառմամբ էականորեն սահմանափակվում են անձի իրավունքները և ազատությունները: Այդպիսի վիճակում հայտնված անձինք օրենքով վերապահված պաշտպանության, այդ բնույթ՝ փաստաբանի (պաշտպանի) օգնությունից օգտվելու իրավունքը ունեն:

Յուրաքանչյուր որ ունի ծերբակալման, կալանավորման կամ մեղադրանք առաջադրելու պահից պաշտպան ուժնեալու իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 20):

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ունի ոչ միայն այն անձը, ով ունի բավարար նյութական միջոցներ, այլև նա ով չունի փաստաբան վարձելու բավարար միջոցներ:

Հաշվի առնելով այս ինստիտուտի հասարակական նշանակությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար: Պետությունն, իր վրա վերցնելով փաստաբանի վճարումը, միաժամանակ վարույթն իրականացնող մարմիններին պարտավորեցնում է ապահովել փաստաբանի մասնակցությունը գործի քննությանը:

Փաստաբանությունը՝ որպես ժողովրդավարական ինստիտուտ, ունի խորը արմատներ: Այն նույնքան իին է, որքան դաստիարակությունը: Սա խոսում է փաստաբանության ինստիտուտի հասարակական նշանակության մասին: Փաստաբանը, ցույց տալով իրավաբանական

օգնություն, հետապնդում է ոչ միայն մասնավոր շահեր, այլև հասարակական, որովհետև կոչված է օժանդակելու արդարադատության իրականացմանը:

Փաստաբանության հասարակական նշանակությունը հետևյան է. *առաջին՝* հասարակությունը ոչ միայն շահագրգռված է, որ ոչ մի հանցագործ չմնա անպատճիժ, այլև ոչ մի անմեղ անձ չենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի: Եթե մեղադրյալի իրավունքները խախտվել են, կամ նա անմեղ է և կրում է անարդարացի պատճիժ, ապա ողջ հասարակության համար, հանձինս նրա բոլոր անդամների, ծագում է վտանգ՝ հայտնվել նման վիճակում և ենթարկվել իրավունքների նման խախտումների: *Երկրորդ՝* փաստաբանի խնդիրը չէ հանցագործությունը թարցնելը կամ մեղադրյալին արդարացնելը: Անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ փաստաբանը պաշտպանում է ոչ թե հանցագործին, այլ որպես մեղադրյալ ներգրավված անձին, որը համարվում է անմեղ՝ մինչև դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Փաստաբանը կոչված է անձին իրավաբանական օգնություն ցույց տալու միջոցով նպաստել արդարադատության իրականացմանը: Թյուր է այն կարծիքը, որ փաստաբանը դատարանում միայն պահանջում է իր պաշտպանյալի արդարացում: Այն դեպքում, եթե գործով հավաքված ապացույցները վկայում են անձի մեղադրության մասին, կամ ամբաստանյալը հանդես է գալիս խոստվանությամբ, իհարկե, փաստաբանը չի պահանջում իր պաշտպանյալի արդարացում: Նա պարտավոր է դատարանի ուշադրությունը իրավիրել այն ամենի վրա, ինչը կարող է օգնել ամբաստանյալին:

Փաստաբանական գործունեությունը Սահմանադրությամբ և օրենքներով ճանաչված իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացմանը օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով («Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 5):

Եթե փաստաբանի անհրաժեշտության նախն որևէ կասկած չի առաջացել, ապա նրա իրավական վիճակի վերաբերյալ պատմության տարբեր ժամանակահատվածներում եղել են տարբեր մոտեցումներ:

Եղել են ժամանակներ, երբ փորձ է արվել փաստաբանությունը մտցնել պետական մարմինների համակարգի մեջ, իսկ փաստաբաններին դարձնել ծառայողներ: Այս տարբերակը երբևէ իրեն չի արդարացրել, և փաստաբանները միշտ անլեզաւ իրավաբանական օգնություն են ցույց տվել մասնավոր անձանց:

Կյանքի փորձը ցույց է տվել, որ փաստաբաններն իրենց առջև դրված խնդիրները կարող են իրականացնել միայն մեկ հասարակա-

կան կազմակերպության մեջ միավորված լինելու դեպքում: Փաստաբանների միավորումն այս հիմնական ձևում է, որն ապահովում է բազմակողմանի իրավաբանական օգնություն:

Փաստաբանության ինստիտուտի դերը և նշանակությունը կախված է տվյալ հասարակության զարգացման մակարդակից:

Փաստաբանության ինստիտուտը լիարժեք կարող է գործել միայն ժողովրդավարական հասարակության պայմաններում: Փաստաբանության կազմակերպման և գործունեության հիմքում ընկած սկզբունքը կարող են գործել միայն այնպիսի հասարակությունում, որտեղ առաջնայինը մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է:

Խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում փաստաբանությունը՝ որպես ժողովրդավարական ինստիտուտ, կորցրեց իր դերը և նշանակությունը: Բացակայում էր պատշաճ վերաբերմունքն ինչպես փաստաբանության, այնպես էլ փաստաբանների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ներկայացվող դատադիրական բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը փաստաբանության դերի բարձրացումը և նրա հետագա զարգացումն է: Այն սերտորեն կապված է դատաիրավական մյուս ինստիտուտների հետ, և առանց հզոր փաստաբանության խոսք լինել չի կարող անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, մրցակցային դատավարության և արդարադատության ճիշտ իրականացման մասին: Փաստաբանությունն արդարադատության անիվի բաղկացուցիչ մասն է:

Փաստաբանության դերի բարձրացման և նրա հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 1998թ. հունիսի 18-ին:

Առանձնակի է 2004թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի դերը, քանի որ այն սահմանում է ՀՀ փաստաբանական գործունեության կազմակերպման և իրականացման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ տարածքում իրականացվող փաստաբանական գործունեության վրա:

ՀՀ տարածքում փաստաբանական գործունեության իրականացման կարգը որոշվում է քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգործերով, սույն օրենքով և այլ օրենքներով («Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3):

Թեև փաստաբանական գործունեության մասին օրենքում առանձին հոդված նվիրված չէ փաստաբանության խնդիրներին, սակայն փաստաբանական գործունեության հասկացության և օրենսդրության մեջ տեղ գտած մի շարք այլ ընդհանուր դրույթների վերլուծությունից

կարելի է եզրակացնել, որ նրա խնդիրներն են՝ ա) իրավաբանական օգնություն ցոյց տալու միջոցով քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, բ) արդարադատության իրականացնան ընթացքում կողմներին ներկայացնելու միջոցով օգնել դատարանին բազմակողմանի, լրիվ և օրինական հետազոտելու գործի հանգամանքները և դրանով միաժամանակ նպաստել օրինականության ապահովմանը։ Յուրաքանչյուր փաստարան նշված խնդիրներն իրականացնելիս պետք է գործի օրենքով նախատեսված միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանի փաստարանական վարվելակերպի պահանջները։

Փաստարանական գործունեության խնդիրներին անդրադառնալիս պետք է հաշվի առնել նրա առանձնահատկությունները։ Այսպես, ի տարբերություն մեղադրանքի ֆունկցիայի, որտեղ դատախազը պարտավոր է նաև ճեղք բերել անձին արդարացնող կամ պատախանատվությունը մեղմացնող ապացույցներ, պաշտպանության ֆունկցիան կրում է միակողմանի բնույթ, այսինքն՝ փաստարանը պարտավոր է կատարել վատահորդի շահերին շահասող գործողություն։

Փաստարանական գործունեության հիմքում ընկած են օրինականության, անկախության, կամավորության, հնքնակառավարման, հրապարականության, մրցակցության սկզբունքները։ Փաստարանությունը՝ որպես ժողովրդավարական ինստիտուտ, կարող է գործել միայն այս սկզբունքների առկայության պայմաններում։

Ինչպես բոլոր իրավապահպան մարմինների, այնպես էլ փաստարանների պալատի գործունեությունը հիմնված է **օրինականության սկզբունքի վրա**։ Փաստարանի կողմից իրականացվող իրավապահտպան գործունեության ընթացքում օրինականության պահանջների պահպանումն առավել կարևոր է, քանի որ նա կոչված է իրավարանական օգնություն ցոյց տալու։ Փաստարանը պետք է հարգի օրենքի պահանջները, գործի օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով։

Եթե փաստարանների պալատը խախտում է Սահմանադրությունը և օրենքները, ապա այն կարող է լուծարվել («Փաստարանության մասին» ՀՀ օրենք, հոդված 29):

Փաստարանների պալատի կազմակերպման և գործունեության հիմքում ընկած է **անկախության սկզբունքը**։ Փաստարանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին։

Փաստարանն իր գործունեության ընթացքում առնչվում է դատարանի, դատախազության և այլ մարմինների հետ, և չի բացառվում այդ մարմինների կողմից փաստարանների նկատմամբ ներգործության կիրառում։ Այդպիսի ներգործության բացառման համար կարևոր երաշ-

խիք է այն, որ փաստաբանների միությունը ինքնակառավարվող հասարակական կազմակերպություն է:

Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորների, լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեության իրականացմանը («Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենք):

Քրեական կամ քաղաքացիական դատավարությունում փաստաբանն իր վստահորդի շահերի պաշտպանության համար իրավունք ունի քորոքարկել վարույթի իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները, ինչպես նաև իր կարծիքն արտահայտել գործի հանգանքների վերաբերյալ:

Փաստաբանը չի կարող հետապնդել և պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված իր պարտականությունների, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» և միության կանոնադրության պահանջներին համապատասխան իրականացրած ցանկացած գործողության, այդ բվում՝ իր մասնագիտական պարտականությունները բարեխիղ կատարելիս, դատարանում և իրավապահպան այլ մարմիններում հայտնված կարծիքի համար:

Փաստաբանների անկախությունը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Ծիշտ է, նրանց գործունեության նկատմամբ պետությունը հսկողություն չի իրականացնում, սակայն հետևում է, որ փաստաբանների պալատը և նրա անդամները պետք է գործեն օրենքի շրջանակներում: Փաստաբանը չի կարող գործել կամայականորեն և վստահորդի հանդեպ ստանձնած պարտավորությունը պետք է իրականացնի պատշաճ ձևով:

Փաստաբանների անկախության համար կարևոր երաշխիք է փաստաբանների պալատի **ինքնակառավարումը**: Սրա եռությունն այն է, որ փաստաբաններն իրավունք ունեն լուծելու բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են փաստաբանների պալատի կազմակերպմանը և գործունեությանը:

Այդ հարցերն իրենց լուծումն են ստանում պալատի ընտրովի մարմինների կողմից:

Փաստաբանների պալատը, որպես անկախ, ինքնակառավարվող միավորում, օգտվում է հասարակական կազմակերպությունների համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից: Որպես ինքնակառավարվող միավորում՝ այն չունի իր վերադաս մարմինը: Ինքնակառավարումը ենթադրում է համակարգի ներսում կազմավորվող ընտրովի մարմինների միջոցով պալատի առջև դրված խնդիրների իրականացում:

Փաստաբանության համար կարևոր են նաև դատավարության սկզբունքները՝ իրապարակայնությունը, մրցակցությունը և այլն: Այսպես, եթե մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման ֆունկցիաները վերապահեն մեկ անձի, ապա փաստաբանի մասնակցությունը գործի քննությանը ավելրոր կլիներ: Միայն մրցակցային դատավարությունում, որտեղ դատարանը հանդիսանում է կողմերի պայքարի անաշխատ դիտող, փաստաբանի՝ որպես հասարակության լիազորված ներկայացուցչի համար բացվում է գործունեության լայն ասպարեզ:

Փաստաբանական գործունեության հիմնական ուղղությունները նպատակառողջված են փաստաբանության խնդիրների իրականացմանը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «**Փաստաբանական գործունեությունը ներառում է՝ ա) խորհրդատվությունը, այդ բվում՝ փաստարդերի ուսումնակրությունը, իրավաբանական բնույթի տեղեկանքների և այլ փաստարդերի կազմումը, բ) ներկայացուցչությունը, գ) պաշտպանությունը»:**

Ըստ դեպքերում խորհրդատվությունից հետո վստահորդները պայմանագրեր են կնքում փաստաբանների հետ՝ պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելու համար:

Բացի խորհրդատվությունից, փաստաբանները կազմում են իրավաբանական բնույթի տեղեկանքները և այլ փաստաթղթեր:

Այդ տեղեկանքները և փաստարդերը կարող են ուղղված լինել դատարանին, դատախազությանը և այլ իրավապահական մարմիններին, ինչպես նաև՝ պետության ներկայացուցական և գործադիր մարմիններին:

Փաստաբանը, իրականացնելով պաշտպանություն կամ ներկայացուցչություն, կարող է կազմել միջնորդություններ, բողոքներ և դատավարական բնույթի այլ փաստարդեր: Կամ փաստարդեր, որոնք պետք է կազմվեն օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան և, բնականաբար, այդպիսի փաստաբուղը կարող է կազմել միայն փաստաբանը (օրինակ՝ վճռաբեկ բողոք):

1. Օրենսդրության կիրառման վերաբերյալ փաստաբանական խորհրդատվությունը նրա գործունեության ամենատարածված ուղղություններից է: Խորհրդատվության արդյունքում քաղաքացիները հնարավորություն են ստանում տեղյակ լինել գործող օրենսդրությանը և իրականացնել իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
2. Փաստաբանը քաղաքացիական և վարչական իրավախսախումների վերաբերյալ գործերով ներկայացուցչություն է իրականացնում դատարանում:

Քաղաքացիական դատավարությունում նա ներկայացնում է քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և երրորդ անձանց շահերը:

Փաստաբանի լիազորությունները հաստատվում են օրենքով սահմանված կարգով: Դատարանում գործը վարելու լիազորությունը ներկայացնուցին (փաստաբանին) իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարել դատավարական գործողություններ (ՀՀ քաղ. դատ. օր., հոդված 42):

Փաստաբանը՝ որպես ներկայացուցիչ, իրավունք ունի ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները, հայտնել բացարկներ, ներկայացնել ապացույցներ: Փաստաբանը՝ որպես գործին մասնակցող անձ, պետք է իր դատավարական իրավունքներից օգտվի և իր դատավարական պարտականությունները կատարի բարեխղճորեն (ՀՀ քաղ. դատ. օր., հոդված 28):

3. Քրեական գործերով պաշտպանի մասնակցությունն առավել կարևոր է, քանի որ նշված ոլորտում էապես սահմանափակվում են անձի իրավունքները և ազատությունները: Պատահական չէ, որ Սահմանադրությամբ նախատեսվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջդրման պահից պաշտպան ունենալու իրավունք» (ՀՀ Սահմանադրություն, հոդված 20):

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ պաշտպանության ինստիտուտին վերաբերող հարցերը կարգավորված են մասնամասն: Ի տարբերություն նախկինի՝ գործող օրենսդրությամբ քրեական գործերով պաշտպան կարող է հանդես գալ միայն փաստաբանը: Այդիսի կարգավորումը պատահական չէ և բիսում է մրցակցային դատավարությունից, որտեղ կողմերը պետք է իրենց «գենքով» կամ միջոցներով լինեն իրավահավասար:

Պաշտպանի օրենսդրական բնորոշումը հստակեցնում է նրա կարգավիճակը: **Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավարանական օգնություն օրենքով չառգեղված բոլոր միջոցներով (ՀՀ քր. դատ. օր., հոդված 68):**

Փաստաբանը պաշտպանի կարգավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից և այդ մասին անմիջապես տեղյակ է պահում վարույթն իրականացնող մարմնին:

Քրեական դատավարությունում պաշտպանի (փաստաբանի) մասնակցության հիմքում ընկած է կասկածյալի կամ մեղադրյալի ցանկությունը: Եթե նա չի ցանկանում ունենալ պաշտպան, ապա պաշտպանությունն իրականացնում է անձամբ:

Առանձին դեպքերում օրենքը պաշտպանի (փաստաբանի) մասնակցությունը քրեական գործով վարույթին համարում է պարտադիր, եթե կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համբ, կույր լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների կամ հոգեկան խանգարումների հետևանքով չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, կասկածյալը կամ մեղադրյալը անչափահաս է և այլն (ՀՀ քր. դատ. օր., հոդված 69):

Քրեական գործով վարույթին մասնակցելու պահից պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ առաջադրված մեղադրանքին առանձին, կոնֆենտնոցիալ, անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների բվի և տևողության սահմանափակման, հայտնել բացարկներ, հարուցել միջնորդություններ, ծանոթանալ գործի նյութերին և այլն (ՀՀ քր. դատ. օր., հոդված 73):

Ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ փաստաբանի աշխատանքը ենթակա է վարձատրման: Իհարկե, ցանկալի կլիներ, որ անձը իրավաբանական օգնություն ստանար անվճար, սակայն հարց է առաջանում՝ ինչպե՞ս պետք է իրականացվի փաստաբանի վարձատրությունը:

Փաստաբանի աշխատանքի վարձատրումը փաստաբանության կազմակերպման և գործունեության ամենաբարդ հիմնահարցերից է: Տարբեր երկրներում կիրառվում են փաստաբանի աշխատանքի վարձատրման տարբեր եղանակներ:

Մեր հանրապետությունում մինչև փաստաբանության մասին գործող օրենսդրության ընդունումը կիրառվում էր փաստաբանի աշխատանքի վարձատրման սակագնային եղանակը: Հիմք ընդունելով վերոշարադրյալ՝ անհրաժեշտ է նշել, որ նման պատասխանատու, միևնույն ժամանակ նրանկատ աշխատանքը պետք է կատարել միայն էթիկայի կանոններին համապատասխան:

Այժմ անդրադառնանք բուն հարցի՛ փաստաբանական էթիկային, հենց իրավունքի էթիկայի հասկացությանը և աղբյուրներին:

Իրավունքի երիկայի հասկացությունը և աղբյուրները

Իրավունքի երիկայի սկզբնաղբյուրները սկիզբ են առնում Հին Հունաստանի փիլիսոփայությունից, որն առաջացել է Ա. Ֆ. Լոսկի «կալոգաստիյա»՝ «իրաշախ-բարի» հին հունական բարի վերլուծության ժամանակ: Պլատոնի «պետություն», Արիստոտելի «Քաղաքականություն» աշխատությունները գործնական փիլիսոփայության իմքնատիպ ձեռնարկներ են, որոնցում միաձուված ձևով ներկայացվում են նրանց տեսակները պետության, արդարության և բարոյական հատկանիշների վերաբերյալ:

«Երիկա» հասկացությունն առաջացել է հուներեն *ethos* բառից և նշանակում է սովորույթ, բարոյական բնափրություն: Առաջին անգամ այն գործածվել է Արիստոտելի կողմից որպես «հետազոտության հատուկ բնագավառի» գործնական փիլիսոփայության բնորոշում, բանի որ վերջինս փորձում է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ պետք է կատարենք:¹

Իրավունքի երիկայում սուբյեկտը հանդես է գալիս ոչ միայն որպես իր շահերի կրող: Նա հանդիսանում է նաև իրավունքի արարիչը, իրավունքը համալրում է կոնկրետ բովանդակությամբ, մեկնաբանում, հաղորդում է այն, կարող է իրականացնել, փոփոխել կամ չճանաչել այն:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի իրավունքի աղբյուրների խնդիրը:

Որոշ իրավաբանների կողմից տրվում է նաև իրավական բարոյականության աղբյուրները: Քանի որ բարոյականության ոլորտն անսահման է, բազմաթիվ երևույթներ կարող են դիտվել որպես աղբյուրներ: Այդ առումով հարկավոր է ընտրել մերողը և մերժաբանությունը:

Համաձայն մերողորդիկական մոտեցման՝ բարոյական գիտակցությունը ձևավորվում է զարգացած մշակույթի և կայացած մշակութային արժեքների հիման վրա: Իսկ իրավական գիտակցությունն իր հերթին չի կարող ձևավորվել մշակույթից և բարոյականությունից դուրս, այն սանում է դրանցով:

Անդադար վերլուծության կոնկրետ մեթոդաբանությանը՝ աղբյուրները կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը **արժեքայիմ (արժիութական) բովանդակության** աղբյուրներն են: Դրանց շարքին կարելի է դասել սովորույթները, առասպեկտները, կրոնը: Այդ երևույթները իրենցից ներկայացնում են նախարարոյականություն և համապատասխանաբար՝ նախարավունք,

¹ Краткая философская энциклопедия. М., 1994, с. 543

աստիճանաբար վերափոխվելով բնական իրավունքի և դրա հետագա ձևերի, և իրավական բարոյականության:

Երկրորդ խումբը՝ գնոսիոլոգիականն է, որի մեջ մտնում են բնական իրավունքը, հոռմեական իրավունքը, պողիտիվ իրավունքը և կենդանի իրավունքը:

Երրորդը՝ պրակսիոլոգիական խումբն է, որոնց թվին են դասվում՝

- սոցիալ-մշակութային գործընթացները,
- սոցիալ-քաղաքական գործընթացները,
- սոցիալ-տնտեսական գործընթացները¹:

Իրավունքի էթիկայի աղբյուրների երկրորդ խումբը կսահմանենք որպես **զնոսիոլոգիական** (զնոսիս՝ ճանաչություն բառից): Այն ներառում է ժամանակակից իրավական բարոյականությանը պատմական առումով նախորդող իրավական երևոյթների և համակարգերի վերլուծությունը: Այստեղ կներառենք պողիտիվ իրավունքը և այսպես կոչված կենդանի իրավունքը: Այս խմբին կդասենք նաև այնպիսի աղբյուր, ինչպիսին է գիտությունը մարդու մասին՝ անտրպալոգիան:

Սլքյուրների երրորդ խումբը կրնութագրենք որպես **պրակսիոլոգիական** (պրակսիս՝ գործնական բառից): Այն ներառում է տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային ոլորտներում հասարակական փոփոխությունների իրական հակումները: Մարդու բարոյա-իրավական գիտակցության մեջ իրական երևոյթների վերափոխման պրակտիոլոգիական աղբյուրները բացատրվում են սոցիոլոգիական հետազոտություններով և մշակութարանական վերլուծություններով:

Փաստարանի վարքագծի կանոնագիրը

Աշխարհում վաղուց արդեն հայտնի են փաստարանների էթիկայի կանոնագրեր, որոնք ներկայացնում են փաստարանների մասնագիտական վարքի էթիկական կանոնների ժողովածու: ԱՄՆ-ում դեռևս 1908թ. հայտնվեցին Մասնագիտական էթիկայի կանոնները, որոնք բաղկացած էին 70 պարագրաֆներից և սահմանում էին կանոնների բավականին ամրողական ցանկ՝ կապված դատարանի և գործընկերների հետ փոխհարաբերությունների, պարտականությունների հանդեպ բարեխսիղճ վերաբերմունքի, ազնվության և անկեղծության, հոնորարի նշանակման չափավորության խնդիրների հետ²: Ֆրանսիայում փաստարանների կողմից էթիկային և փաս-

¹Տե՛ս Ե.Ո.Ազարյան: Փաստարանության հիմունքները, Երևան, 2006թ. Էջ

²Տե՛ս Վատման, Դ. Պ. Ածոկատակա էտիկա. Մ. 1977թ., ս. 27.

տարանի վարքագծի կանոների տեսանկյունից հատկապես մեծ տեղ էր տրվում Մ. Մոլի «Փաստաբանական մասնագիտության կանոններ» աշխատությանը: Այս տեսանկյունից Փարիզյան փաստաբաների խորհուրդը երկար տարիներ գեղեցիկ ավանդույթ ուներ: Փաստաբանական գործունեություն իրականացնելու դեռ նոր իրավունք ստացած փաստաբաններին նվիրում էին Մ. Մալի գիրքը: Գրքում, մասնավորապես, տեղ են գտել փաստաբանի կողմից իրականացվող գործունեության էթիկային վերաբերող հարցեր՝ շարադրված կետեր, որոնք ավելի շուտ խորհուրդներ են իշխեցնում և կողմնարոշիչ նշանակություն ունեն փաստաբանի համար: Օրինակ՝ փաստաբանի կողմից սոցիալապես անապահով անձին իրավաբանական օգնության տրամադրումը: «Դա նույնպես պետք է կատարել՝ պահպանելով ինքնուրույնությունն ու չափի զգացումը: Այս կատեգորիայի անձանց իրավաբանական օգնության տրամադրումը պետք է կատարվի բարեխղճորեն, այնպես, ինչպես դա փաստաբանը կաներ, եթե նա վարձատրվեր¹:»

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեր հանրապետության ոչ վաղ անցյալում առկա էր միայն մեկ էթիկայի կանոնագիրը՝ «Քողորի համար կոմունիզմի շինարարի բարոյական կանոնագիրը»: Այս կամ այն մասնագիտության էթիկայի կանոնագրքի մշակման անհրաժեշտության մասին խոսելու ցանկացած փորձ միանգամից կանխվում էր շրջկոմների և ԽՍԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժինների կողմից, այն հասարակ պատճառաբանությամբ, որ մեզ մոտ գոյություն ունի միայն մեկ բարոյականություն, մեկ էթիկա՝ բոլորի համար: Այժմ իրավիճակը կտրուկ փոփիտության է ենթարկվել: Կարելի է ասել, որ մասնագիտական էթիկայի կանոնագրքերի ստեղծման գաղափարը զանգվածային տարածում է ստացել: Այսիս, քննարկվում են լրագրողի, բժիշկի և նույնիսկ գործարարի կանոնագրքերը: Որոշակի միտում կա նաև օրենսդրի մոտ: Այսպես, օրենսդրուեն ամրագրվել են քաղաքացիական ծառայողների էթիկական կանոնները: Իսկ ինչպես է կարգավորվում ՀՀ-ում փաստաբանի վարքը: Այսօր բացի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքից, այս ոլորտը կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտը՝ «Փաստաբանի վարքի կանոններ» ակտն է, որտեղ բարձրացվում են փաստաբանական գործունեություն իրականացնելու համար շատ կարևոր հարցեր: Փաստաբանի վարքագծի կանոններից են:

¹Տե՛ս www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила адвокатской профессии во Франции. М. Молло

Ազնվորյում

«Գործերի մեջ անըիծ ազնվորյունը փաստաբանական գործունեության՝ որպես հասարակական ծառայության ղեկավարող սկզբունքն է»¹: Հասարակական զիտակցության մեջ ազնվորյան սկզբունքն իր մեջ ներառում է նաև ճշմարտացիության սկզբունքը: Որոշ մարդիկ նույնիսկ համարում են դրանք հոմանիշ հասկացություններ:

Կոմպետենսություն և բարեխածություն

Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ դրսորվող կոմպետենսությունը և բարեխածությունը՝ նրա պրոֆեսիոնալիզմը և բարձր որակը ծևափորող անհրաժեշտ բաղկացուցիչներն են: Հարկ է ընդգծել, որ տվյալ կոնտեքստում «կոմպետենսության» տակ ենթադրվում է ոչ թե պարզապես փաստաբանի կողմից գործող օրենսդրության իմացությունը, այլև նրա մոտ այդ գիտելիքները գործնականում, այդ թվում՝ գործեր վարելիս, կիրառելու համար անհրաժեշտ և բավարար հնատությունների առկայությունը, ինչպես նաև նրա ընդունակությունը այդ գիտելիքներն առավել արդյունավետ օգտագործել ի շահ փաստահորդի: Մենք լիովին համոզված ենք, որ իրավաբանական օգնության կարիք ունեցող անձն իրավունք ունի ակնկալել, որ ցանկացած փաստաբան բավարար ընկերություններ և հնտություններ ունի առաջացող ցանկացած իրավաբանական հարցերն իր (խոսք վերաբերում է փաստահորդին) շահերին համապատասխան լուծելու համար:

Եթե փորձենք գործակեռներ անցկացնել, օրինակ, ՈՒ-ում գործող մի շաբթ փաստաբանական միությունների համանման կանոնների հետ, ապա կտեսնենք, որ դրույթները մեծամասամբ համընկնում են ՀՀ-ում գործող փաստաբանի վարժագծի կանոնների հետ: Ու Դ-ի համանման շատ փաստաբերում շեշտը դրվում է փաստահության վրա, քանի որ փաստաբանի գործունեության հիմքը փաստաբանի նկատմամբ փատահությունն է: Ոչ մի պարագայում փաստաբանը չպետք է թույլ տա անվստահության առաջացում: Վատահության շարաշահում փաստաբանի կողմից արգելվում է²: Սրանք փատահության վերաբերող դրույթներն են, որոնց պահպանումը ոչ միշտ է պահպանվում ՀՀ փաստաբանների կողմից: Դա կարող է դրսորվել ինչպես գիտելիքների թերի իմացության, մասնագիտական էթիկայի կանոններին չհետևելու, փաստաբանի «երկակի խաղի», սոցիալապես անապահով խավին ոչ պատ-

¹Տե՛ս Դ. Վատման, Աдвокատская этика. М., “Юрид. лит.” 1977г., с. 38.

²Տե՛ս www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила Професии. В.А. Валентинович.

շաճ իրավաբանական օգնություն ցույց տալու և այլ հանգամանքների տեսքով:

Այստեղ պետք է համաձայնվել հետևյալ մտքի հետ. «Փաստաբանական էթիկան զրաբանակային իրավագետների ստեղծագործությունը կամ տարբեր հեղինակների ցիտատների ժողովածու չէ, այլ փաստաբանի ազատ բարոյական ընտրությունը՝ ինձնված իր խորհի վրա: Ցուրաքանչյուր փաստաբան ունի ներքին ձայն, բայց նրանցից ոչ բոլորն են հետևում դրան: Էթիկայի խնդիրը յուրաքանչյուր փաստաբանին իր իսկ խորհի ձայնի հասցնելն է»¹: Միայն խորհի խայթ ունեցող փաստաբանը չի ստանձնի իր գիտելիքների համար բարդ գործի լուծումը:

Էթիկայի կանոնները փաստաբան-գործողները փոխարարելությունների համակարգում

Հարկ է իիշել, որ նախկինում այս առումով գոյություն ուներ այնպիսի ընդգրկուն հասկացություն, ինչպիսին է՝ «արտադրամասային համեմաշխությունը»: Այդ բավականին դրական երևույթը հարկավոր է վերականգնել նաև մեր օրերում: Որպես կանոն՝ այս էթիկական նորմը բավականին հաջող սահմանված է ներկայում Հայաստանում գործող «Փաստաբանի փարքազծի կանոնագրքում»:

«Փաստաբանների միջն հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ հարգանքի և փաստաբանների մասնագիտական համերաշխության սկզբունքների հիման վրա» (հոդված 31): Կանոնագրի նույն հոդվածում փորձ է արփում բացատրել «մասնագիտական համերաշխության» գաղափարը՝

«Փաստաբանը չպետք է՝

1. բոլոր տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ,
2. վստահորդին դրդել այլ փաստաբանի հետ ունեցած իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվելուն,
3. վստահորդի հետ քննարկի այլ փաստաբանի՝ անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հնտություններին, հանձնարարության վարձատրության պայմաններին վերաբերող և հանձնարարության կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ»:

¹Տե՛ս Վ.Ա. Վալենտինովիչ, նշված աշխատությունը:

Երիկայի կանոնները փաստարան-դատարան փոխհարաբերությունների համակարգում

Մեր կարծիքով փաստարանն իրավունք ունի վստահորդի, լրագրողի հետ խոսակցության ընթացքում արտահայտել իր կարծիքը դատարանի կայացրած որոշման կամ վճռի վերաբերյալ։ Սակայն նրա անհամաձայնությունը դատարանի կայացրած որոշման կամ վճռի հետ կարող է հիմնավորվել միայն օրենքի նորմի ոչ ճիշտ կիրառման դեպքում։ Բացի այդ, ինչպես փաստարանը կարող է խորհուրդ տալ վստահորդին բողոքարկել դատարանի այս կամ այն որոշումը, միաժամանակ հույս չհայտնելով, որ բողոքը կրավարարվի։

Երիկայի կանոնները փաստարանի և դատախազության, իրավապահպան մարմինների փոխհարաբերությունների համակարգում

Դատավարության ցանկացած փուլով վարելով գործը ներկայացնի կարգավիճակով՝ փաստարանը պետք է նախևառաջ ներկայանա և ներկայացնի իր լիազորությունները։ Պետական ծառայողը պետք է հստակ պատկերացնի ունենա, թե ո՞ն հետ գործ ունի։ Փաստարանը պարտավոր է իրեն այնպես պահել, որպեսզի իր գործողությունները, դատավարության հետ կապված փաստարդերը (բացատրություններ, միջնորդություններ, հայտարարություններ և այլն), ինչպես նաև տրվող հարցերը չվնասեն իրավապահպան մարմինների հեղինակությանը, չվարկարեկեն գործընկերներին և չնվաստացնեն դատավարության մասնակիցների արժանապատվությունները։

Չի կարելի հեգին դատավարության կամ ստուգման մասնակիցներին, չի կարելի վստահորդի առջև ցույց տալ, որ նրանց գործողությունները շատ փոքր նշանակություն ունեն փաստարանի համար և որ այդ գործողությունները կատարող անձինք իրենց գործարար հատկանիշներով չեն համապատասխանում զբաղեցված պաշտոններին։ Դա միանգամից բացասական հակազդեցություն է առաջացնում և բերում է փոխհարաբերությունների վատքարացնանը՝ ի վեհականություն։

Եվ վերջում կուգենայինք ավելացնել, որ երիկայի կանոնների ցանկացած խախտման դեպքում անհրաժեշտ է դիմել Փաստարանների պալատի համապատասխան մարմին՝ կարգավահական հանձնաժողով։

Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ փաստաբանական գործունեության ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կողմը՝ պետք է նշել, որ այսօր թեև խորհրդային տարիներից բավականին զարգացած, սակայն միևնույն ժամանակ զարգացող փաստաբանական գործունեության ոլորտում (փաստաբանական երիկայի տեսակյունից) ՀՀ Փաստաբանների պալատի անդամները շատ արգելքներ պետք է հաղթահարեն:

Մեր կարծիքով վերը նշված խնդիրների լուծման համար արդյունավետ կլիներ, որ բացի «Փաստաբանի վարքագծի կանոններից» ՀՀ Փաստաբանների պալատը մշակեր «Երիտասարդ փաստաբանի ուղղույց» կոչվող ժողովածուն, որն ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ մեզ մոտ կդառնար ավանդույթը և կնվիրվեր փաստաբանական պալատի կողմից փաստաբանական արտոնագիր ստացող երիտասարդ փաստաբաններին: Այս կունենար խորհրդատվական բնույթ սկսնակ փաստաբանների համար: Կնպաստեր փաստաբանի կոչմանը վայել փաստաբանների նոր սերնդի առաջացմանն ու զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ. (27.11.2005թ. փոփոխություններով)
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունված 14.12. 2004թ.
- ՀՀ Փաստաբանի վարքագծի կանոնագիրը, ընդունված 18.02.2006թ.

Մասնագիտական գրականություն

- Փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, Ա. Հ. Դավթյան, Երևան, 2000թ.
- Փաստաբանության հիմունքները, Ե. Ռ. Ազարյան, Երևան, 2006թ.
- ՀՀ դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Ս. Դիլբանյան, Երևան, 2003թ.
- Краткая философская энциклопедия, М., 1994 թ.

5. Адвокатская этика, Ватман Д.П., М., 1977 г.
6. Нравственные основы судебной защиты, Дайков А.Д., М., 1978г.
7. Адвокатская этика, Барщевский М.Ю., М., 1992г.
8. Тактика и этика судебного допроса, Ароцкер Л.Е., М., 1969г.
9. Собрание сочинений, Кони А.Ф., 1967-1969гг.

Ինտերնետային կայքեր

1. www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила адвокатской профессии во Франции. М. Молло
2. www.russian-lawyers.ru/pravila.shtml. Правила Професии. В.А. Валентинович

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻճԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՇԱԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© «ԼԻԳԼ ԸԼԱՅԼԵՆՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստորագրված է տպագրությամ՝ 22.03.2008: Չափսը՝ 60 x 84
1/32: Թուղթը՝ օֆսեթ № 1: Տառատեսակը՝ «Times Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: 4,75 տպ. մամուլ:

*ք. Երևան, Նալբանդյան 7, բն.2
հեռ. 54-01-99, ֆաքս՝ 58-02-99
Էլ.փոստ ayla@ayla.am*

«ԳԱԿՈԳ - ՀՐԱՋՐ» ՍՊԸ



*հրատարակչությունում
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru*

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՆԵՐԿԱ ՎԻճԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱԽՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ
ԳԻՏԱԺՈՂՈՎՐ**

«Հայաստանի Երիտասարդ իրավաբանների Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

«Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և Երիտասարդ իրավաբանների կողմից: Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված իրավաբանական գիտելիքների զարգացմանը:

Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան հանդսանում է «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողով համակազմակերպիչ: Ասոցիացիայի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.ayla.am:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրականացվող դատադրավական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Հայաս-


տանի իրավաբանական հիմնադրամը հանդիսանում է «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի համակազմակերպիչ: Հիմնադրամի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.lawfoundation.am:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերություն

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հիմնադրվել է 1997թ.-ին: Ընկերությունը իր ստեղծման պահից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառայություններ է մատուցում իր վստահորդներին: Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկերություններից մեկը, որը ռազմավարական և ապագային միտված մոտեցում է ցուցաբերում Վստահորդների գործերի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակների ցանցը նրա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ընկերությունը ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: Ընկերությունը աշխատում է խոշոր, բազմազգ կորպորացիաների և ֆինանսական ինստիտուտների, ընտանեկան և մասնավոր բիզնեսը ներկայացնող հաճախորդների լայն շրջանակների հետ: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնեկ իրավաբանական ընկերություններից մեկը: Ընկերությունը հանդիսանում է «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի համակազմակերպիչ: Ընկերության պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.la.am:

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻճԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ
ԻՐԱՎԱԲԱՆ ՌԱՍՏԱՐԱՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԿ**

**«Հայաստանի Երիտասարդ Իրավաբանների Ասոցիացիա հասարակական
կազմակերպություն**



«Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նրանց սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացման՝ որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրավանացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում ուղղված իրավաբանական գիտելիքների զարգացմանը ու տարածմանը:

Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան կազմակերպումը հանդիսանում է «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողով համակազմակերպիչ: Ասոցիացիայի պաշտոնական վեր կայքի հասցեն է www.ayla.am:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ



Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀիրավաբանական անձնանշ պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրավանացվող դատարակական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական հիմստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարմանը պարզությունը և փաստաբանների բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀիրավաբանական բուհերի և բուհերում իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հանդիսանում է «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի համակազմակերպիչ: Հիմնադրամի պաշտոնական վեր կայքի հասցեն է www.lawfoundation.am:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերություն»



«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերությունը հիմնադրվել է 1997թ.-ին: Ընկերությունը իր ստեղծմանը պահից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառայություններ է մատուցում իր վստահողությունին:

Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկերություններից մեկը, որը ռազմավարական և սպազման միտված մոտեցու գուցաբերում վաստարակություն ունի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակների ցանցը նորա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ ընկերությունը ինչպես մասնավոր անձնանշ, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: Ընկերությունը աշխատում է խոշոր, բազմազա կորպորացիաների և ֆինանսական հնատիտուտների, ընտանեկան և նասնական բիզնեսը ներկայացնող հաճախորդների լայն շրջանակների հետ: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնեկ իրավաբանական ընկերություններից մեկը: Ընկերությունը հանդիսանում է «Փաստաբանություն» ներկա վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի համակազմակերպիչ: Ընկերության պաշտոնական վեր կայքի հասցեն է www.la.am: